

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան Շարք օր հեռաձայնալիս հաղորդակցութիւն մը ունեցաւ Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաձէի հետ, Ուրբաթ 26 Ապրիլին Թիֆլիսը հարուածած երկրաշարժին առնչութեամբ: Նախագահ Քոչարեան ցաւակցութիւն յայտնած է երկրաշարժին պատճառած կոհերուն համար: Քոչարեան Հայաստանի օժանդակութիւնը առաջարկած է Շեւարտնաձէի: Նշենք, որ երկրաշարժին օրը՝ 26 Ապրիլին, Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի թելադրանքով՝ մասնագէտներէ եւ բժիշկներէ բաղկացած օժանդակութեան խումբ մը արդէն իսկ մեկնած էր Թիֆլիս:

ՊԵՅՄԵՆԿԻ ՍԷՉ

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԵՒ ԻՐ ՉԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԻՑԸ ԳՈՒՄԱՐԵՑԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ

Վարչապետ Ռոպերթ Քոչարի երկէ շարունակեց Չինաստան պաշտօնակաւ ետօրեայ այցելութիւնը, որուն սկսած էր Շարք օր: Ան երկէ Պեյճինգի մէջ տեսակցեցաւ չին իր պաշտօնակիցին՝ Ժու Ռոնկաի հետ եւ քննարկեց Միջին Արեւելքի իրադրութիւնը եւ երկկողմանի յարաբերութեան ամրապնդումը, մասնաւոր տնտեսական եւ առեւտրական ոլորտներէն ներս: Երկու վարչապետներուն շուրջ ժամ մը տեւած դռնփակ հանդիպումէն ետք անոնց միացան Հարիրի ընկերացող նախարարներ Քարամ Քարամ, Պասէլ Ֆլեյխան եւ Ղասսան Սալամէ, ինչպէս նաեւ Չինաստանի մէջ Լիբանանի դեսպան Չէյտան Սադիր եւ լիբանանեան պատուիրակութեան մնացեալ անդամները:

Չին պաշտօնատար իր խօսք առնելով բարի գալուստ մաղթեց լիբանանեան պատուիրակութեան, որ «կու գայ բարեկամ երկրէ մը, որուն հետ յարաբերութիւնները կը յատկանշուին բազմաթիւ հարցերու նկատմամբ կեցուածքներու նմանութեամբ, մասնաւոր ինչ կը վերաբերի Միջին Արեւելքի հարցերուն եւ պաղեստինցիներուն ու իսրայէլացիներուն միջեւ բախումներուն»: Ան կոչ ուղղեց պաղեստինցիներուն շրջաններէն իսրայէլեան ուժերու առանց նախապայմանի հեռացումին եւ դատաւարտեց պաղեստինցի նախագահ Եասէր Արաֆատի դէմ գործադրուող միջոցառումները: «Չինաստան դէմ է ամէն տեսակի ահաբեկչութեան եւ պօրապիգ կը կանգնի անոր դէմ պայքարին, բայց այս պայքարը պէտք է հիմնուի անհերքելի փաստերու վրայ, պէտք է խնայեմ անմեղները եւ երկու չափ - երկու կշիռէ պէտք պէտք է մնայ», ըսաւ ան: «Չինաստան նախանձախնդիր է Լիբանանի հետ իր բարեկամութեան պահպանման եւ անոր պարգացումին», եզրափակեց ան: Հարիրի խօսք առնելով ընդգծեց, որ արաբներու եւ իսրայէլի միջեւ միակ կարելի խաղաղութիւնը ամբողջական խաղաղութիւնն է, այսինքն՝ պաղեստինցիներուն, Սուրիոյ եւ Լիբանանի հետ խաղաղութիւնը: Ան բացատրեց Պեյրութի արաբական վեհաժողովին որդեգրուած խաղաղութեան նախաձեռնութիւնը: Հարիրի ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի մնայուն անդամ մեծ պետութիւններէն պահանջեց աշխատանք տանիլ խաղաղութեան համար: Վարչապետը համոզում յայտնեց, որ կարելի է բազմաթիւ բնագաւառներէ ներս պարգացնել երկու երկիրներու տնտեսական յարաբերութիւնները եւ հիացումնքով արտայայտուեցաւ Չինաստանի տնտեսական յառաջդիմութեան մասին: «Մենք փոքր երկիր մը ըլլալով մեծ դերակատարութիւն ունինք, եւ լիբանանեան կառավարութիւնը նեցուկ պիտի կանգնի երկու երկիրներու պետական եւ սեփական մարպետներուն միջեւ գործակցութեան», ըսաւ ան, ակնարկելով Լիբանանի մէջ ջրամբարներու եւ հողագործութեան համար ջուրի ծրագիրներուն մէջ չինական ընկերութեանց հաւանական դերակատարութեան, մասնաւոր եթէ Պեյճինգի ֆինանսատնտեսական օժանդակէ: Ապա, տնտեսութեան նախարար Պասէլ Ֆլեյխան եւ Չինաստանի արտաքին առեւտուրի փոխ նախարար ստորագրեցին առեւտրական գործակցութեան միացեալ յանձնախումբի ատենագրութիւնը, իսկ մշակութիւն նախարար Ղասսան Սալամէ իր չին պաշտօնակիցին հետ ստորագրեց 2002էն 2005 մշակութային գործակցութեան ծրագիրը: Երեկոյեան, Չինաստանի վարչապետը ընթրիք մը տուաւ ի պատիւ լիբանանեան պատուիրակութեան:

ԱՐԱՅԱԹԻ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ ՊԱՇԱՐՈՒՄԸ ՊԻՏԻ ՎԵՐՑՈՒԻ

ԻՍՐԱՅԷԼ ՄԵՐԺԵՑ ԺԵՆԻՆԻ ԳԾՈՎ ՄԱԿԻ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ՇԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ



Շարուն եւ Փերէս՝ ժողովի պահուն

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարունի կառավարութիւնը երէկուան իր նիստին քննարկումի առարկայ դարձուց ՄԱԿի յանձնախումբի մը դիմաց ժենիւնի գաղթականներու դռները բանալու եւ քննութիւն կատարելու հարցը: Աւելի ուշ, յայտարարուեցաւ, որ իսրայէլ կը մերժէ գործակցել յանձնախումբին հետ: Միւս կողմէ, պաղեստինցիներն ու իսրայէլացիք երէկ շարունակեցին նաեւ Բեթղեհէմի պաշարուած եկեղեցւոյ բանակցութիւնները, որոնք օրերէ ի վեր ցարդ լուծումի մը չէին յանգած: Իսկ Ռամալլայի մէջ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի արգելափակման հարցին շուրջ, իսրայէլեան ազդերները հաղորդեցին, որ համաձայնութիւն մը գոյացած է:

Իսրայէլեան քաղաքական ազդերը մը հաղորդեց, որ կառավարութիւնը ընդունեց Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշի առաջարկը, որ պիտի յանգի Արաֆատի կեդրոնատեղիին պաշարման վերջնական կամ քրտնազերծման լոյսին տակ, ամբողջացի կամ բրիտանացի զինուորներ պիտի ստանձնեն պատասխանատուութիւնը այն չորս պաղեստինցիներուն, որոնք պաղեստինեան զինուորական ատենի մը կողմէ դատուեցան եւ բանտարկութեան դատաւարտուեցան իսրայէլի գրասարկութեան նախարար Ռեհւել Մոշէրի սպանութեան համար: Շարունի կառավարութիւնը ուժի դէմ 17 ձայնով վաւերացուց Պուշի առաջարկը: Իսրայէլեան ազդերները աւելցուցին, որ Պուշի յառաջիկայ շաբաթ Ուաշինգթոնը հրաւիրած է Շարունը՝ բանակցութիւններ կատարելու համար: Աւելի ուշ, Արաֆատ եւ ընդունեց Պուշի ծրագրերը:

Խօսելով Բեթղեհէմի բանակցութիւններուն մասին, պաղեստինցի բանագնաց եւ Բեթղեհէմի քաղաքապետ Հաննա Նասէր ըսաւ, որ այս հանդիպումը վերջին առիթն է եւ ճակատագրական կը նկատուի: Նասէր աւելցուց, որ բանակցութիւններուն կամ կարելի պիտի ըլլայ յառաջիկայ արձանագրել, կամ ալ ձախողութեամբ պիտի աւարտին՝ առիթ չտալով նոր հանդիպումներու: Պաղեստինցի գլխաւոր բանագնաց Սալա թաւարի ըսաւ, որ իր պատուիրակութիւնը պատասխանատու է:

ՌՈՒՄԱ

ՌՈՒՄԱ ՄԸ ՊԱՅԹԵՑԱԻ ՎԼԱՏԻՔԱԻՔԱԶԻ ՄԷՉ. ԱՆՆՈՒԱԶՆ 7 ԶՈՉ

ՎԼԱՏԻՔԱԻՔԱԶ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ հարաւ գտնուող Հիւսիսային Օսէթիոյ մայրաքաղաք Վլատիքապոլի մէջ Կիրակի օր ռուս մը պայթած է բացօթեայ շուկայի մը մէջ, առնուազն եօթը կոհ իլեյով եւ 41 ուրիշներ վիրաւորելով: Հիւսիսային Օսէթիան, ուր կը գտնուի Ռուսիոյ շրջանին մէջ պիտուորական մեծագոյն խարխուրը, Չէչենիոյ դրացի հանրապետութիւն մըն է: Ռուսիականութեան մէկ բանբերը յայտնած է, թէ պայթումը կը թուէր ահաբեկչական արարքի մը հետեւանք ըլլալ, սակայն թէ շատ կանխաձեռն է վերջնական գնահատում մը կատարելու: Երկու օր առաջ, Ռուսիոյ ռուսիականութիւնը հրապարակած էր ժապաւէն մը, ուր ցոյց կը տրուէր չէչեն պատերազմի «իշխան» խաթապի դիակը: Ան սպաննուած է յատուկ գործողութեան մը ընթացքին:

Ներ կը սպասէ իսրայէլացիներէն: Պաղեստինցիներն ու իսրայէլացիք ցարդ երեք հանդիպումներ ունեցած են Բեթղեհէմի Մ. Մոնդեան եկեղեցւոյ տաճանապարտէսէն համար, սակայն բոլոր ճիգերը ապարդիւն մնացած են: Թաւարի աւելցուց, որ իսրայէլի պիտի փոխանցուի, թէ եկեղեցիին մէջ գտնուող զինեալները կազա պէտք է մեկնին: Իսրայէլ կը պահանջէ, որ եկեղեցին ապաստանած զինեալները անձնատուր ըլլան: Պաղեստինցի պատանի մը, որ մինչեւ քանի մը օր առաջ եկեղեցիին մէջ էր, ըսաւ, որ զինեալներէն եօթը կամ ութ հոգի պատրաստ են աքսորուելու՝ վերջ տալու համար տաճանապիւն, եթէ Արաֆատ համաձայն գտնուի: Մինչ այդ, Շարուն կը փորձէր կարելի եղածին չափ ուշացնել ժենիւնի գաղթականներու հետաքննութիւնը, որ սկզբունքով պիտի կատարուէր ՄԱԿի պատուիրակութեան մը կողմէ: ՄԱԿի խմբակը քանի մը օրէ ի վեր պատրաստ վիճակի մէջ կը սպասէր ժենիւնի մէջ:

Շար.ը՝ էջ 10

ԱԼԵՔՍԱՆՏՐ ԼԵՊԷՏ

ԶՈՉ ԳՆԱՑ ՈՒՂԱԹԻՈՒ «ԱՐԿԱՄ»Ի ՄԸ

ՆՈՎՈՍԻՊԻՐՍԿ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուս նախկին պորավար Ալեքսանտր Լեպետ, որ բանալի դերակատարութիւն ունեցած է նախկին խորհրդային նախագահ Միխայիլ Գորբաչովի դէմ 1991ին պետական հարուած մը ձախողութեան մատնելու մէջ եւ որ Պորիս Ելցինի դէմ նախագահութեան պաշտօնին իր թէկնածութիւնը դրած էր, Կիրակի օր ուղղաթիռի արկածի մը պիտի գացած է:



Զօր. Ալեքսանտր Լեպետ

Սիւլի Ելցինի Բրասնայարք շրջանի ստիպողական կազմութիւններուն նախարարութեան մէկ բանբերը յայտնած է, թէ օդի վատ պայմաններու մէջ, ուղղաթիռը ելելուտրական հոսանքի թելերու բախած է եւ ջախջախւած է: 52 տարեկան Լեպետ Բրասնայարքի կառավարչին էր: Առնուազն 6 ուրիշներ կոհացած են արկածին, կան նաեւ վերապրողներ:

Խորհրդարանական մը հաւանական նկատած է, որ Լեպետի մահը հանքերով հարուստ այս նահանգին մէջ կացութիւնը պիտի ապակայունացնէ: Ան ըսած է, որ թերեւս ջախջախումը արկածի հետեւանք չէր: Լեպետ 1991ին հանրաձայնօք դարձած էր, երբ բանակ ղրկած էր պաշտպանելու համար Ռուսիոյ հանրապետութեան օրուան նախագահը՝ Պորիս Ելցինը, Քա. Կէ. Պէ.ի պորակցութեամբ Խորհրդային Միութեան նախագահ Գորբաչովի դէմ պետական հարուածի փորձի մը ընթացքին:

Անոր քայլը խորհրդանշական էր, սակայն անկաթափ տուած էր Ելցինի շրջանակին բարոյականի եւ օժանդակած՝ պետական հարուածին ձախողութեան:

Խորհրդային Միութեան քայքայումէն ետք, Լեպետ, որ քուպ մըն էր, աւելի եւս հանրաձայնօք դարձած է, երբ գլխաւորած է ռուսական բանակին 14րդ պորամարը՝ 1992ին վերջ տալու համար նախկին խորհրդային Մոլտաւիոյ մէջ արիւնալի հակամարտութեան մը:

1995ին բանակէն հրաժարելէ ետք, Լեպետ խորհրդարանական ընտրուած է եւ 1996ի նախագահական ընտրութիւններուն, Ելցինի դէմ իր թէկնածութիւնը դրած է՝ խոստանալով փութածութեան վերջ տալ: Ան երրորդ դիրքը գրաւած է ընտրութիւններուն եւ Ելցին կրեւիլի Ապահովութեան Խորհուրդին մէջ անոր կարելու պաշտօն մը տուած է:

Այդ տարին Լեպետ կրցած է չէչեն ընթրատներու հետ խաղաղութեան համաձայնութիւն մը գոյացնել, ինչ որ յանգած է Մոսկուայի անշտողական նահանգէն հեռացման:

ՊԱՅԹՈՒՄ

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ ՍՕՏ

Սախանցեալ գիշեր անձանօթներ փոքր ռումբ մը նետած են Թանգարանի շրջանի նախարարաց խորհուրդի նստավայրին մօտ, որպէսզորով միւրական վնասներ: Ընդհանուր դատախազ Արման Արպում ըսաւ, որ յանցագործներ պիտի միջոցառուեն շէնքի վրայ, առաջ կրցած են փախուստ փոխ: Ան յայտնեց, որ առաջին փորձերէն մարմինները կասկածելի անձեր կը հետապնդեն:

ԵՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է

ԱՊՐԵԼ 24Ի ՆՈՒԻՐՈՒԱԾ «ԱԶԴԱԿ»Ի ԲԱՅԱՌԻԿԸ

24 ԱՊՐԵԼ 2002

87 համարակ

144 ԷՁ, ՍԱԿ՝ 5000 L.Ռ.

ՄԵԹՆԻ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒԽԱՅՊԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ՝
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՁ

Մուխայպեր ընտանիքը երկ կաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ կը շարունակէ իր խորհրդակցութիւններն ու հանդիպումները Մեթնի քաղաքական եւ կրօնական հեղինակութիւններուն հետ, ծանօթանալու երեսփոխան Ալպեր Մուխայպերի մահով թափուր դարձած Մեթնի յոյս ուղղափառներու երեսփոխանական աթոռին գծով անոնց կարծիքներուն: Այս ծիրէն ներս, ընտանիքէն պատուիրակութիւն մը այցելեց Լեռնալիբանանի յոյս ուղղափառներու առաջնորդ Ժորժ Խըրտրի եւ անոր հետ քննարկեց այս հարցը:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
ԿԸ ՀԵՐՔԷ «ՆԱՀԱՐ» Ի ԼՈՒՐԵՐԸ

Նախագահական պալատի յրատուական գրասենեակը երկ կաղորդագրութեամբ մը հերքեց «Նախար» օրաթերթի երկրորդ համարին մէջ յոյս տեսած այն լուրերը, ըստ որոնց՝ նախագահ Կոր. Էմիլ Լահուտ հաւանաբար կեցւածք մը պիտի յայտարարէ տնտեսական վիճակին եւ ազգային դրամանիշին մասին:

Հաղորդագրութեամբ հաւաստեց, որ այս տեղեկութիւնները երեսակայածին, անհիշիկ եւ անհիմն են, մանաւանդ որ տնտեսական հարցերուն գծով նախագահին կեցուածքները յայտնի են բոլորին:

Հաղորդագրութիւնը նաեւ յիշեցուց նախագահ Լահուտի կողմէ՝ իրարու հետ չջրհորել քաղաքական հարցերն ու քաղաքացիին օրապահիկին վերաբերող խնդիրները, իսկ տնտեսական հարցերու լուծման համար մեկնիլ պետութեան եւ ժողովուրդի գերագոյն շահերէն:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Լուսին Շիշոյեան եւ զաւակները՝ Կրէկորի եւ Կապրիէլ
- Տիկին էլիզ Շիշոյեան
- Օր. Վերժին Վարդիվառեան
- Տէր եւ տիկին Վահէ Խաչատուրեան եւ զաւակները
- Տիկին Մարի Տեմիրճեան եւ զաւակը՝ Ժիրայր
- Օր. Հայկանուշ Պալքեան
- Տէր եւ տիկին Րաֆֆի Տեմիրճեան եւ զաւակները
- Տէր եւ տիկին Սարգիս Տեմիրճեան եւ զաւակը
- Տէր եւ տիկին Գրիգոր Մանուչեան եւ զաւակները
- Տեմիրճեան ընտանիք
- Վարդիվառեան ընտանիք
- Սուլթանեան ընտանիք
- Գարավարդեան ընտանիք
- Բարսեղեան ընտանիք
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, զաւակն եւ հարազատին՝

ԿԱՐԱՊԵՏ ԾԻՇՈՅԵԱՆԻ
(Ծնեալ՝ Պէյրուս, 1951ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 28 Ապրիլ 2002ին, գիշերուան ժամը 9:00ին, «Ռեզք» հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 29 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահալպ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Մըլիկէ, «Քալապալեան» շէնք, չորրորդ յարկ, Երեքշաբթի 30 Ապրիլին, 2 Չորեքշաբթի 1 եւ Հինգշաբթի 2 Մայիսին:

ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Մայր Արսլանեան եւ զաւակները
- Տեաք Ծովսէփ եւ Ժանօ Արսլանեան
- Տէր եւ տիկին Արա եւ Սօսի Պուտազեան եւ զաւակը
- Տիկին Ազատուհի Արսլանեան եւ զաւակները
- Տիկին Անժէլ Քէվրանեան
- Տիկին Մարի Արսլանեան
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր եւ հարազատին՝

ԲԻԻԶԱՆԴ ԱՐՍԼԱՆԵԱՆԻ
(Ծնեալ՝ 1923ին)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի, 28 Ապրիլ 2002ին, Քեսապի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 29 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Հայկ. ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Հայկէպի ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահալպ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Սուլէյմանիէ, Հայկ. Երեքշաբթի 30 Ապրիլին եւ Չորեքշաբթի 1 եւ Հինգշաբթի 2 Մայիսին, իսկ Քեսապի բնակարանին մէջ՝ Ուրբաթ 3, Շաբաթ 4 եւ Կիրակի 5 Մայիսին:

ՀԻՒՄԵՅՆ ԽՍՏԻ ԸՆՆԱԴԱՏԵՑ ՀԱՐԻՐԻՆ

Խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի Շարաթ օր խստի քննադատեց վարչապետ Ռաֆիք Հարիրին, զոր ամբաստանեց նախագահի նման վարելո՞ւ յանցանքով, ինչպէս նաեւ հանրապետութեան նախագահն ու նախարարաց խորհուրդը շրջանցելու յանցանքով: Հիւսէյնի ըստով, որ

պետութեան գումարներն ու ունեցուածքը բառին իսկական իմաստով կը թալանուին, եւ այս ծիրէն ներս կ'իյնայ ընթացիկ եւ պարզ հեռաձայններու ապապետականացումը: «Նախագահին եւ վարչապետին միջեւ յարաբերութեան վատթարացումը վատ անդրադարձ կ'ունենայ երկրին վրայ, այն պահուն, երբ ան կարիք ունի վստահութեան», ըսաւ Հիւսէյնի:

ՓԱՂԱՆԳԱՌՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՆ

ՄՈՒՆԻՐ ՀԱԺ ԱՅՍՕՐ
ՊԱՇՏՈՆԸ ԿԸ ՅԱՆՁՆԷ
ՔԱՐԻՄ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Փաղանգաւոր Կուսակցութիւնը երկ գումարեց իր 24րդ ընդհանուր ժողովը, որուն ընթացքին կուսակցութեան նախագահ Մուհիթ Նաժ, որ այսօր իր յաշտօնը դիմում յանձնէ նորընփոխ նախագահ Քարիմ Բագրատունիին, կարողաց իր յաշտօնավարութեան շրջանին մասին փեղեկագիր մը:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԸ ԿԸ ԳՏՆՈՒԻ ՄԵԾ ՏԱԳՆԱՊԻ ՄԸ ՍԵՄԻՆ

Կ'ԸՍԵ ԺՈՄՊԼԱԹ

Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթ գգուցուց, որ Միջին Արեւելքը կը գտնուի քաղաքական մեծ տագնապի մը սեմին:

Բջիջային հեռաձայնի ընկերութիւնները մեծ անցարգել մըն են այս բնագաւառի կարգաւորման ճիգերուն դիմաց եւ պետութեան հզօր կը թուին ըլլալ: ցաւօք, նախարարաց խորհուրդի վերջին ժողովը եօթը ժամ այս թղթածրարը քննարկելէ ետք ոչ մէկ արդիւնքի հասաւ, ըսաւ Ժոմպլաթ երէկ՝ ժողովրդային պատուիրակութիւն մը ընդունած ատեն:

«ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ»
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԵԼՈՅԹԸ

Անցնող շաբաթավերջին, Համապայիւնի «Կարկաչ» Մանկապատանեկան երգչախումբին հրաւերով Լիբանան այցելեց Բերիլ թեմի Ռուսմանական խորհուրդի «Մեսրոպ Մաշտոց» մանկապատանեկան երգչախումբը:



(Լուսանկար՝ Պ. ԶԱՐՈՒԿԵԱՆԻ)

Շաբաթ, 27 Ապրիլի երեկոյեան ժամը 7:00ին, Յովհաննէս Պողոսեան թատերադրահին մէջ «Մեսրոպ Մաշտոց» ունեցաւ ելոյթ մը՝ հովանաւորութեամբ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպիսկոպոս Խաչերեանի: Ելոյթին ընթացքի՝ շուրջ 80 երեխաներ, իմբավարութեամբ

Գայիանէ Սիմոնեան-Տերեանի, եւ դաշնակի ընկերակցութեամբ Սեւան Ներսէսեանի, ներկայացուցին շուրջ երկու ժամ տեւողութեամբ յայտագիր մը, որ կ'ընդգրկէր հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով արեւի քան երկու տասնեակ մանկական եւ ազգային-հայրենասիրական երգեր: Ելոյթին մասին մանրամասնութեամբ պիտի անդրադառնանք հետագային:

ԱՐԱՄԱ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ
PONTIFICAL MISSIONS
ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ուրբաթ, 26 Ապրիլ 2002ին, Արամ Ա. կաթողիկոս վեհաքանին մէջ ընդունեց Կաթողիկէ Եկեղեցւոյ Բարեսիրական Հիմնարկներու Խորհուրդի Միջին Արեւելքի

պատասխանատուն Տեհիս Մէտրն եպիսկոպոսը: Շուրջ ժամ մը տեւած հանդիպման ընթացքին Տեհիս եպիսկոպոս տեղեակ պահեց վեհաքան հայրապետը ընդհանրապէս Կաթողիկէ Եկեղեցւոյ Բարեսիրական Հիմնարկներու գործունեութեան, եւ յատկապէս Միջին Արեւելքի մէջ ծաւալած աշխատանքներուն մասին: Վեհաքան հայրապետը իր գոհակալութիւնը յայտնեց տարուող մարդասիրական աշխատանքին համար: Հանդիպումը առիթ մը եղաւ նաեւ խօսելու Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ճամբով կատարուող ընկերային ծառայութեան եւ մարդասիրական օժանդակութեան մասին, շեշտելով տարեց թէ անհափառ հայրերը ինքնուրու ընծայուած խնամքը զանազան հաստատութիւններու միջոցով:

Նշենք, որ Տեհիս եպիսկոպոս անմիջական օգնականն է Pontifical Missionի նախագահ Սթըրն եպիսկոպոսին:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՇԵՐՍԻՆԵ ԹՆՃՈՒԿԵԱՆԻ մահուան առիթով, Թնճուկեան եւ Յակոբեան ընտանիքներ կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները:

ԼՕՄԻ «Ա. Պուլլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին 1000 \$, Ծերանցի 1000 \$, «Չուարճոց» կեդրոնին 1000 \$:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

● Թնճուկեան եւ Յակոբեան ընտանիքներ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակցեցեցին իրենց մօր, անբողջ եւ հարազատին՝ ՇԵՐՍԻՆԵ ԹՆՃՈՒԿԵԱՆԻ մահուան սուգին:

ԿԱՐՁՈՒ ՏՈՒՆ

● Էլնեֆիէ, Պատրիարքարանի ետեւ, «Չարեհ Ա.» փողոց, Ա. յարկ, գեղատեսիլ դիրք, պարտզով: Հեռ. 01 - 560809:

ՇՈՒՇԻ ԶԱՏԱԳՐՄԱՆ ԵՒ ՎԻԳԷՆ ԶԱՔԱՐԵԱՆԻ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ՝
Ը. Յ. Դ. ԼԵՍԻ «ԴՐՕՇԱԿ» ՄԱՍՆԱՃԻՂԻՆ

Կը բանախօսէ՝
ԸՆԿ. ՅԱԿՈՒԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 8 Մայիս 2002ին, երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

ՏԵՍԱԿԵՏ

ՊԱՂԵՍԻՆՅԻ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ
ՅԱՆՁՆԱՌՈՒՆՈՐ ՍԵՐՈՒՆԳ ՄԸ

Պէճիքական «Էր. Թէ. Պէ. Է.Ֆ.» պատկերասփիռի կայանին համաձայն՝ պաղեստինցի պատանիներու ուշագրաւ տոկոս մը պատրաստ է ապագային դառնալու ազգի նահատակ: Հոգեբաններու եւ ընկերային ծառայողներու խմբակ մը, բոլորն ալ ֆրանսախօս պէճիքացիներ, հարցախոյլ կատարած են պաղեստինեան շրջաններուն մէջ եւ ի յայտ եկած է, թէ եօթէն տասնհինգ տարեկան տղոց վարսուն առ հարիւրը պատրաստակամութիւն ունի կեանքը կոհեղու ազգին: Ըստ խմբակի մասնագէտ անդամներուն՝ ապիկա հոգեբանական բարդ ու միանգամայն մտահոգիչ երեւոյթ է:

Սակայն տեղ մը չպակերտեալ հասկնալի չէ՞ այս հոյովոյթը: Ինչ որ տեղի կ'ունենայ վերջին երկու ամիսներուն՝ պաղեստինեան հողերուն վրայ, բնական չէ՞, որ պատանիները մղէ նման ապրումներու: Երբ պատանիին, յատկապէս նոր կազմաւորուող պատանիին կ'ապրի ու հասակ կ'առնէ մթնոլորտի մը մէջ, ուր տիրող զիջաւոր երեւոյթը կենքն է, միջավայրի միակ նիւթը՝ կիներալ պայքարը, ինքնապաշտպանութիւնը, ազգին նկատմամբ յանձնարարութիւնը՝ նաեւ՝ մահուան գնով, կարելի՞ է այլ բան ակնկալել անկէ: Երբ պատանին օրն ի օրն կը շնչէ խրախիչեան բռնարարներու կոհ իր հայրենակիցներուն արեան հոտը, ակնատես կ'ըլլայ Ժենիին սպանդին աներեւակայելի օրէն՝ ահաւոր ու անպատմելի տեսարաններուն, բնականաբար փոխան խաղայիքի կամ հետաքրքրաշարժ հապարումէկ քրաղուններու, ան պիտի նախընտրէ նահատակութիւնը, որ կը մնայ իրաւապահութեան ժողովուրդի մը միակ միջոցը՝ դիմադրելու թշնամիին, պահպանելու մարդկային տարրական իրաւունքը՝ կեանքը:

Իսրայիլեան պետութիւնը, ծայրայեղական վարչապետ Արիէլ Շարոնի գլխաւորութեամբ, շահագործեց Միացեալ Նահանգներու եւ Արեւմուտքի յայտարարած պատերազմը՝ միջազգային ահաբեկչութեան դէմ, եւ իր կարգի, պաղեստինցի «ահաբեկիչները» մաքրագործելու պատրուակով՝ քարոքանդ ըրաւ պաղեստինեան շրջանները, իսկ ու արիւնարբու արշաւի ձեռնարկեց պաղեստինցի ժողովուրդին դէմ: Եւ ահաւասիկ արդիւնքը: Փոխանակ դադարեցնելու յայտնի ըսած «ահաբեկչութիւնը», ան կը մղէ, պատճառ կը դառնայ, որ կազմաւորուի անձնապատանական գործողութիւններու պատրաստ նոր սերունդ մը, որ բնականաբար հետագային պատուհասը պիտի դառնայ Թէյ Աւիի, որ արդէն իսկ կ'ապրի այդ գործողութեանց առթած սարսափը, միջամաշքը: Այլ խօսքով, իսրայիլացի ղեկավարը իր անհաշի ու խելագար ընթացքով կը յառաջացնէ պաղեստինցի պատանիներու նոր հոսանք մը, յանձնառու սերունդ մը: Եւ վերջին հաշուով միակ տուժող պիտի ըլլան Շարոն ու անոր գործակիցները, պիտի ըլլան Իսրայիլ ու իսրայիլացիք:

Ուստի, արեւմուտքցի հոգեբանները, որոնք մտահոգ են պաղեստինցի պատանիներուն ընթացքով, առաջին հերթին պարտին քննարկել հոգեբանական այն վերիվայրումները, զորս կ'ապրին Շարոն եւ ընկերները. պարտին քննարկել ու գտնել դարմանք այն իրաբերիային, որուն մատնուած են իսրայիլեան կառավարութեան անդամները, որոնք կը հանդիսանան անբողջ շրջանին ապակայունացման միակ պատասխանատուն, խաղաղութեան գործընթացին մահուան միակ պատճառը:

ՀՐԱԶ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Պրասեցեակը ամեն օր առաւօտեան ժամը 9:00ն կէսօրէ ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահութիւն (ուիզա-րա եւ պետական հիւանդանոցային բուժում):
 - 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տաման):
 - 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
 - 4) Գաղթականներու նախարարութեան հետ առընչուող հարցեր:
 - 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (խըթ) դիմումներ:
 - 6) Աշխատանքի նախարարութեան հետ առընչուող հարցեր:
 - 7) Զաղաքապետութիւններու հետ կապուած հարցեր:
 - 8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (Աճն էլ Աճ) հետ կապուած հարցեր:
 - 9) Դատական եւ իրաւաբանական հարցերու մասին խորհրդակցութիւն եւ ցուցումներ:
- Դիմողները պէտք է ներկայանան «Ճաղոցեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Պրասեցեակ եւ կամ նախքան ներկայանալ հեռաձայնել 01 - 259881 եւ 01 - 242582 փեղերուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ
ԳՐԱՍԵՆՆԵԿ

ՆԱԽԱՐԱՐ ՄԱՐՈՒԱՆ ՀԱՄԱՏԷ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆ



Նախարար Համատե՛ բուժարանի մուտքից կը պատասխանէ թղթակիցներու հարցումներուն (Լուսանկարը՝ ՍԹԻՏԻՕ ԱՇԵԱԿԻ)

Շաբաթ, 27 Ապրիլ 2002ին, նախարար Մարուան Համատե, երեսփոխան Աքրամ Շեյխյեյ եւ գնդապետ Շերիֆ Ֆայատ, նախօրօք առնուած ժամադրութեամբ, այցելեցին Հայ Ազգային Բուժարան (Ալուհիէ), ուր դիմաւորուեցան Հայ Ազգային Բուժարանի խնամակալութեան, տնօրէնութեան եւ պաշտօնէութեան կողմէ: Անոնք դրուատիքով արտայայտուեցան շրջանին մէջ բուժարանին տարած աշխատանքներուն, առաքելութեան եւ յատկապէս Շուֆի ժողովուրդին ընծայած ծառայութիւններուն համար:

Պատասխանատուները իրենց կարգին, խոստացան իրենց օժանդակութիւնը բերել հաստատութեան յաւելեալ ամրապնդման եւ արագացման համար: Ինչպէս նաեւ խոստացան ամենակարճ ժամանակամիջոցին Հայ Ազգային Բուժարանի տնօրէնութեան եւ խնամակալութեան հետ համախորհուրդ, դիմումներ կատարել պանսպան նախարարութեանց, բուժարանին համար օժանդակութիւններ ապահովելու առաջադրանքով:

Այցելութիւնը տեւեց երեք ժամ, առաւօտեան ժամը 9:00էն 12:00:

ԵԳԻ ՊՏՈՍ

«ՔԱՅԻՏԱ»Ի ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑԱԾ ԻՍԼԱՄԱԿԱՆԻ ՄԸ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Գ.Ա.Հ.Ի.Բ.Ե., 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Եգիպտոսի ապահովութեան բարձրագոյն մէկ ատեանը Ուսամա պըն Լատեհի «Քալիտա»ի ցանցին հետ կապեր ունեցող քաղաքային մը դատաւարութեան տասը տարուան բանտարկութեան, հաղորդեց պաշտօնակալ «Միջին Արեւելք» լրատու գործակալութիւնը (ՄԵՆԱ):

Գործակալութեան տեղիկութիւններուն համաձայն՝ Մանմուտ Հասան Էլ Սայտ Սուլէյման «Քալիտա»ի մօտիկ անձնաւորութիւն մը եղած է ահաբեկիչ Ալման Զաուաբիի գամբով:

Զաուաբիի պըն Լատեհի գլխաւոր օգնականներէն է, ինչպէս նաեւ Եգիպտոսի իսլամական երկրորդ ամենամեծ խումբի՝ ժիհադի ղեկավարը:

«ՄԵՆԱ» յստակօրէն չընդեց Սուլէյմանի գործած ոճիւրները, որոնց պատճառով ան ստացաւ տասը տարուան բանտարկութեան պատիժը: Ան ամբաստանուած էր ժիհադի անդամակցութեամբ, որ կ'ուզէ երկրին կառավարութիւնը տապալել, ինչպէս նաեւ անցադիրներ կեղծելու յանցանքով:

Անհրաժեշտ է նշել նաեւ, որ նախանցեալ օր Եգիպտոսի մէկ որոշումով ձերբակալուեցան երեսուցամեկ կապիտան Սուլէյման Էլ Սայտեցիին ապահովական աղբիւրներ:

ՍԵՆՏԻՄԱԿԱՆ ԱՐԱՐԻԱ

«ԱՐԱՄՔՕ» ՊԻՏԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐ ՀՈՒԻ՞Ր

ՏՈՒՊԱՅ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Սենտական Արաբիա կ'ուսումնասիրէ քարիւղի մեծագոյն ընկերութեան «Արամքօ» սեփականաշնորհման կարելիութիւնները, յայտնեց քարիւղի նախարար Ալի Նալիմի:

Նալիմի, որ կը խօսէր, «Արամքօ»ի Հիւսթընի մասնաճիւղին անձնակազմին ներկայութեան, մանրամասնութիւններ չի փոխանցեց: Սակայն սենտիգի եւ արեւմուտքի մասնագետներ դիտել տուին, որ Նալիմի կ'ակնարկէր ոչ թէ անբողջ ընկերութեան հիմնական գործունէութեան: Մասնագետ մը ըսաւ, որ «Արամքօ»ի կարգ մը բաժնիները սեփականաշնորհելու ծրագիրը քանի մը տարի է ի վեր քննարկման սեղանի վրայ է:

«Արամքօ» սեփական քանի մը ընկերութիւններու հետ միացեալ ձեռնարկութիւն մըն էր մինչեւ 1980ական թուականները, երբ պետութիւնը տիրացաւ բաժնետոմսերուն հարիւր տոկոսին՝ պայմանով պետական ընկերութեան մը, որ կը նկատուի քարիւղ արտադրող մեծագոյն ընկերութիւնը աշխարհի տարածքին:

Հ. Յ. Դ. ԼԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ԸԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 87ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ՝ ՌԱՈՒՏԱՅԻ, ԺՊԵՅՅԼԻ ԵՒ ԶԱՇԼԵԻ ՄԵՋ

Հայկական Ցեղասպանութեան մեծագոյն եւ ամենէն յատկանշական «յուշարձաններէն» ժիւլի «Թուշնոց Բոյն»ի Դանիական սրահին մէջ, Կիրակի 28 Ապրիլին Հաւաքուած Հ. Յ. Դ. ԼԵՄԻ «Արարատ» կորիզի կողմէ կազմակերպուած Եղեռնի յիշատակի ձեռնարկին:



«Թուշնոց Բոյն»ի սրահի բեմէն՝ կենդանի պատկեր մը

Ձեռնարկը սկսաւ «Սերոր Աղբիւր» պատանեկան միութեան անդամներուն կողմէ, որոնք Եղեռնը եւ Հայկական պահանջատիրութիւնը բնութագրող պատանեկան բարձրացան բեմ: Սրահին պատերուն վրայ ամրացուած էին Ցեղասպանութեան կենդանի ոգին փոխանցող լուսանկարներ:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն յոտնկայս ունկնդրութեան նէն ետք, Հ. Յ. Դ. ԼԵՄԻ «Արարատ» կորիզի անունով ձեռնարկի բացումը կատարեց ինչպէս ընթացեալ, որ առաջին հերթին հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուսանկարները յարգելու Ցեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակներուն յիշատակը: Ապա Երջանեան, իր խօսքին մէջ ներկայացուց նման ձեռնարկ մը «Թուշնոց Բոյն»ի Հաստատութեան մէջ նշելու հիմնական կարեւորութիւնը: Ան անդադարձաւ Եղեռնի եւ Հայկական պահանջատիրութեան իրարայայտող փոխանակումները, իր խօսքը փակելով ներկայացնելով երիտասարդութեան Հաստատակամ խոստումը՝ չմոռնալու Ցեղասպանութիւնը եւ պայքարելու մինչեւ անոր արդարահատուցումը:

Ապա ներկայացուեցաւ Ցեղասպանութիւնը բնութագրող եւ Ցեղասպանութեան միջազգային ճանաչման փուլերը ներկայացնող տեսանկարը, պատրաստուած Հ. Յ. Դ. ԼԵՄԻ կողմէ:

Գործադրուեցաւ խնամքով պատրաստուած գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, Հ. Յ. Դ. ԼԵՄԻ «Արարատ» կորիզի եւ «Սերոր Աղբիւր» պատանեկան միութեան զոյգ երգչախումբներուն կողմէ, որոնք ներկայացուցին «Դաժան կուռում», «Հերոս Տարօնի Երգը», «Խուժան Ազգեր» եւ «Ասպէս ու ես» երգերը:

Ապա բեմ հրաւիրուեցաւ օրուան պատգամախօսը՝ Շանթ Աւետիսեան: Ան իր խօսքը սկսաւ յայտնելով, որ սրահի պատերուն վրայ ներկայացուած Ցեղասպանութեան պատկերները այնպիսի խոսուն փաստեր են Ցեղասպանութեան մասին, որոնք ոչ մէկ բանախօս կամ մամուլ ու տեղեկատուական միջոցներ կրնան նոյնքան հարազատ կերպով ներկայացնել:

նել: Աւետիսեան անդադարձաւ Եղեռնէն ետք կատարուած Ցեղասպանութեան միջազգային ճանաչման աշխատանքներուն, ինչպէս նաեւ Հայ ժողովուրդի կամեանքները, որ կրցաւ թօթափել Եղեռնի անմիջական հետեանքները եւ վերստին ինքնահաստատուել իր բնական ճանաչման արդարեւ ազգ: «Պայքարի անզուգական ոգին պիտի փոխանցուի մեր յառաջիկայ ընտանիքներուն, մինչեւ որ Հաստատակամ խոստումները Ցեղասպանութեան ճանաչման այն օրը, երբ ցեղասպանը պիտի ընդունի իր ոճիրը եւ արդարահատուցումը պիտի կատարէ անոր դիմաց», յայտնեց Աւետիսեան:

Ան Հաստատուեց, որ Հայ Դատի պահպանումը եւ պահանջատիրութիւնը ամբողջ Հայութեան իրաւունքն ու պարտականութիւնն է: Բանախօսը անդադարձաւ նաեւ արցախեան պահանջատիրութեան, իրաւունքները հիմնական մասնակցներէն մէկը՝ Հայ Դատին, աւելցնելով, որ «արցախեան ազատամարտը Հայաստանի ժողովուրդին մօտ արթնացուց պայքարի ոգին» եւ վերստին միացուց Ցեղասպանութեան գոհ Սփիւռքի Հայութիւնը Հայրենի ժողովուրդին հետ, անգամ մը եւս Հաստատուելով որ Արցախի պայքարը եւ անոր ճամբով Հայ Դատը կը պատկանին Հայաստանին:

Աւետիսեան փոխանցեց ներկայիս Հայ ժողովուրդին առջեւ դրուած աշխատանքը, որ ամփոփուած է հետեւեալ 4 հիմնական կէտերուն մէջ. ճշմարտութիւն, արդարութիւն, իրաւունք եւ Հաստատուում:

Անդրադառնալով այսպէս կոչուած «Հայ-Թուրք Հաշտութեան Յանձնարարութեան» Աւետիսեան Հաստատուեց. «Երբ դահլիճ խոստովանի իր ոճիրը, այն ատեն միայն կրնանք նստիլ բանակցութեան, պետական մակարդակի վրայ»:

Բանախօսը իր խօսքը ամրապնդեց վեր առնելով հզօր Սփիւռքի դերակատարութիւնը, աւելցնելով որ այս գծով որեւէ սայթաքում «մեզ կ'առաջնորդէ ձուլումի»: Բանախօսէն ետք բեմ հրաւիրուեցաւ «Թուշնոց

Բոյն»ի տեսուչ՝ Մեղրիկ վրդ. Բարիբեան, կատարելու իր հուսկ բանքը:

Հայր Մեղրիկ յատուկ կերպով անդադարձաւ Հայութեան իրաւունքներուն տիրութիւնը ընելու հարցին: «Վստահաբար մեր թոռները կը տեսնեն մեր ամբողջական Հայրենիքը: Սակայն մինչ այդ տէր եղէք անոր ինչ որ ունիք, որովհետեւ առանց տիրութիւն ընելու ներկայիս գոյութիւն ունեցող եւ արդիւնաւորող արժէքներուն եւ Հայրենիքին, անոնք դիտարկուած կը կորսուին», յայտնեց Հայր Մեղրիկ:

Ապա խօսքը ուղղուեց երիտասարդութեան, Հայր Մեղրիկ անոնց կոչուողով տէր ըլլալու ազգային արժանապատուութեան, Հաստատուելով, որ պատերազմի իջնող մարդը իր յուսահատիքը: Իր խօսքի աւարտին, իբրեւ գնահատանք ընդհանուր առմամբ ԼԵՄԻ եւ մասնաւորաբար «Արարատ» կորիզի աշխատանքներուն, Հայր Մեղրիկ կորիզին փոխանցեց ոսկեխաչ յատուկ յուշանուէր մը:

ԶԱՇԼԵ

Ժալալայի ակումբին մէջ, երէկ յետմիջօրէի ժամը 5:00ին տեղի ունեցաւ պարիւրեան ոգեկոչում, ներկայութեամբ շրջանի Հայութեան:

Ձեռնարկին բացման խօսքը կատարեց ընկերակալ Թաշեան, որ Հայրենի պատմական ընկերակալութեան Ցեղասպանութեան, բեմ հրաւիրեց օրուան բանախօս ընկ. Խաթալ Այնթապլի-Կանը, որ առաւելաբար շեշտը դրաւ Հայկական պահանջատիրութեան վրայ, նշելով, թէ երբեք անխափան պիտի չարտուենք մինչեւ Հայ ժողովուրդի վերջնական յաղթանակը:

Փակման խօսքով Հանդէս եկաւ ներսէս քահանայ Ճերմակեան, որ «Պահպանիչ»ով փակեց 87ամեակի ոգեկոչման Հանդիսութիւնը:

ՌԱՈՒՏԱՅԻ ՄԵՋ

Կազմակերպուեցաւ Հ. Յ. Դ. ԼԵՄԻ «Քալիտա»

Շաբ.՝ էջ 10

ԵՒՐՈՊԱ ՔԱԿԻ ԱՆՈՒՆԸ ՊԻՏԻ ԱՒԵԼՑՆԷ «ԱՀԱՔԵԿՉԱԿԱՆ» ԽՄԲԱԿՆԵՐՈՒ ԻՐ ՑԱՆԿԻՆ ՎՐԱՅ

Եւրոպական Միութեան մէկ դիւանագետը շաբաթավերջին յայտնած է, թէ Ե. Միութիւնը Բիրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան անունը պիտի աւելցնէ «ախաբեկական» խմբակներու իր ցանկին վրայ, հակառակ անոր որ խմբակը իր անունը փոխած է:

Այս որոշումը բնականաբար շատ գոհ պիտի ձգէ Ե. Միութեան թեկնածու Թուրքիան, որ երկար ատեն է ի վեր կոչ կ'ուղղէ Եւրոպայի, որ աւելի խիստ կեցուածք որդեգրէ ՔԱԿի դէմ:

Յարդ Գերմանիա եւ Հոլանտա կ'ընդդիմանային ՔԱԿի Ե. Միութեան ցանկին վրայ դնելու Անգարայի կոչընդուն:

ՔԱԿ այս ամսուան սկիզբը որոշած էր դադարեցնել իր գործունէութիւնը եւ անունը փոխել Բիրտիստանի Ապստոլութեան եւ Ժողովրդավարութեան ժողովի:

Թուրքիա յայտնած էր, որ անունի փոփոխութիւնը չի նշանակեր, որ ՔԱԿ դադարած է «ախաբեկական» ըլլալէ:

Դիւանագետը յայտնած է, որ Ե. Միութիւնը Երկուշաբթի օր (այսօր) վերատեսութեան պիտի ենթարկէ ցանկը եւ ապօրինի պիտի հռչակէ նաեւ պատերու Ասրա Թասունա անջատողական խմբակը եւ թերեւս նաեւ պաղեստինեան Փե. Է.Ֆ. Էլ. Փե. խմբակը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԹՈՒՐԵՒԱ

ՍԵՋԷՐ ԿԸ ՄԵՐԺԷ ՆԵՐՈՒՄԻ ՕՐԷՆՔԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ

ԱՆԳԱՐԱ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ նախագահ Ահմէտ Նեճմետ Սեյթ Շաբաթ օր վերջերս էր քանադակաւ ներու վերաբերեալ ներումի օրէնքի մը բարեփոխումին դէմ, որ կրնար յանգիլ Յովհաննէս Պողոս Բ. պապին դէմ յարձակում գործած Մեհմետ Ալի Ակչայի ապստարակումին:

Ակչա ամբաստանուած է 1981ին պապին վրայ կրակած ըլլալու յանցանքով:

Ան 19 տարի Խալիլոյ մէկ բանտին մէջ արգելափակուած է: 2000ին անոր ներում շնորհուել է ետք, Ակչա վերադարձած է Թուրքիա, ուր բանտարկուած է թղթակիցի մը սպանութեան եւ գողութեան յանցանքներով:

Թրքական թերթերը Կիրակի օր գովասանքներով արտայայտուած են Սեյթի մասին: «Միլիլիթ» թերթը գրած է, որ նախագահը լսած է հանրութեան ձայնը եւ ներումի «գայթակեցուցիչ» օրէնք վերադարձուցած է խորհրդարանին:

ԹՈՒՆՈՒՅ

ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՇՏՈՆԱԶՐԿԵՑ Ն. ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ

Թունուլի նախագահ Չէյն Էլ Ապիտին Պըն Ալի շաբաթավերջին պաշտօնապրկեց երկրին ներքին գործոց նախարար Ապտալլա Քապպին՝ այս ամսուան ընթացքին սինակոկի մը դէմ կատարուած անձնասպանական յարձակումին հետեւանքով, որ պատճառած է 18 սպանութիւն:

Մեկնաբաններու համաձայն՝ նախագահին կողմէ Քապպիի փոխարինումը ընկերային հարցերու նախկին նախարար Հատի Մեհմետով, քայլ մըն է՝ Թունուլը ապահով վայր ըլլալու «պատկերը» վերականգնելու համար:

Կառավարութիւնը նախապէս Էլ Ղրիպա սինակոկին վրայ յարձակումը նկատուած էր արկած մը, սակայն անցեալ շաբաթ պարպուած էր, որ անձնասպանական յարձակում մըն էր կատարուածը:

Չոհերուն թիւր բարձրացաւ 18ի. անոնց մէջ կը գտնուէին նաեւ տասնմէկ գերմանացի եւ մէկ ֆրանսացի քրօսաշրջիկներ:

(ՌՈՅԹԸՐԸ)




ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Աշակուբային Հե

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽԱՌՆՈՒԱԾՔԻ ՏԵՐ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒՀԻՆ ԻՐԱ ՊԱԼԹԱՅԵԱՆ

Ռատելով Իրա (Ի մաստուհի) Պալթայեանի վերջին ստեղծագործութիւններէն, կրնանք հաստատել, որ ան արդէն իսկ ճշգրտօրէն ստեղծագործական ուղին եւ բեղմնաւոր ընթացքի մը մէջ կը գտնուի:



«Սենթիթիմ» Թիւ 16. գործ՝ Իրա Պալթայեանի:

տական երկու ցուցահանդէսներ, առաջինը՝ Զուգի «Կալըրի տ'Արթի», իսկ երկրորդը՝ Առանց Սահմանի Արուեստա-

մենաւոր կերպարներ, առանձին պատկերուած տուներու դիմաց: Հակառակ անոր որ Իրա Պալթայեանի պինդ եւ շերտաւոր քսուածքները որոշ ամբողջական մեծ հաստատականութիւններ զգացողութիւնը կը փոխանցեն ակնդիրին, սակայն անոր սպիտակով երկնազարած կերպարները քնարական շնչոտ մը կուտան անոր գործերուն: Անոնք թէեւ յաճախ տունէն դուրս գործածի տպաւորութիւն կը ստեղծեն, սակայն կարծէք իրենց հանգիստն ու խաղաղութիւնը կը փնտրեն ընդամենը մէջ, հետո՛ւ կեանքի ժխորներէն ու տաղտուկներէն:



«Սենթիթիմ» Թիւ 4. գործ՝ Իրա Պալթայեանի:

գէտներու «Կալըրի տ'Արթի» մէջ: Այս բոլորով հանդերձ, սակայն, մեզի համար ամէնէն յատկանշականը անոր վերջին տարիներու ստեղծագործութիւններն են, որոնք կազմակերպած է անհա-

Բանաստեղծական խառնուածքի տէր այս գեղանկարչուհին ունի ինքնավստահ վրձնահարուածներ եւ գուններն իրենց իրենց ստեղծագործութիւններն են, որոնք կազմակերպած է անհա-

ՄՈՎՍԵՍ ԾԻՐԱՆԻ

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՅԱԿՈՒԲ ԿԻՒՐՃԵԱՆ

Հայ քանդակագործներէն շատ քիչեր միայն տեղ գտած են հանրածանօթ «Պենսիլիա» արուեստի հրատարակութեան մէջ: Այդ քիչերէն մէկը Յակոբ Կիւրճեանն է, որուն մէկ գլուխգործոցը՝ Գարեգին Ա. Յովսէփեանի վեհափառին դիմաքանդակը կը պահուի Անթիլիասի մայրավանքի «Կիլիկիա» թանգարանին մէջ: Հայրենի մասունքէն քաղուած եւ որոշ յապաւումներով, ստորեւ տրուած ակնարկը ընդհանուր գաղափար մը կու տայ անոր ստեղծագործական կեանքին մասին:

Ճամանակի թելադրանքով Յակոբ Կիւրճեանին ստեղծագործութիւնը տրամախաչել է երբեք հասկացութիւն՝ Ռուսաստան, Ֆրանսա եւ Հայաստան: Այդ ժամանակն է որոշարկել մեր արուեստի զարգացման օրինակաբերութիւնները, մի ընթացք, որ թոյլ է տուել Կիւրճեանին քանդակագործ դարձնելու հայ առաջին քանդակագործը համարելու:

Նոր ժամանակներէ հայ արուեստի զարգացման խորագրակերպի վրայ անկարելի է անտեսել քանդակագործի բարդ ու դժուարին ճակատագիրը, արուեստագէտ, որ հեռաւոր Շուշիից Ռուսաստանով Փարիզ հասաւ ու հաստատուեց այնտեղ: Քանդակերտութեան ընթացքի զգացումը, որ Կիւրճեանին ստիպեց ընտրել այդ ուղին, կարելի է բարեբաստիկ սկիզբ համարել հայ արուեստի համար, որ այդ շրջանում կորցրել էր իր դարաւոր աւանդոյթները եւ դպրոց չուներ:

Կիւրճեանի ստեղծագործութիւնը ձեւաւորուեց աշխարհում տեղի ունեցող պատմական բարդ գործընթացների հոլովում, երբ որոշուեց Հայաստանի, յեղափոխական Ռուսաստանի եւ պատերազմական Եւրոպայի ճակատագիրը: Քանդակագործ դարձնելու արուեստում մեծագոյն վերափոխումների եւ համադրման դարաշրջանը:

Կիւրճեանի քանդակագործական պատկերացումները սկիզբ առան դեռեւս Ռուսաստանում (Մոսկուայում), ուր նա 1899-1904 թուականներին սովորում էր Ֆիլետիերի մասնաւոր ռեալիստական ուսումնարանում: Քանդակագործ դառնալու ձգտումը Կիւրճեանին ուղեկցում էր դեռ մանկուց, բայց, ամենայն հասանականութեամբ, վերջնական վճիռը նա ընդունեց այստեղ՝ Մոսկուայում, երբ քանդակագործ Փառլոյ թրուպեցցոյի արուեստանոցում «ազատ աշխատելու լիակատար հնարաւորութիւն» ստացաւ: Այն շրջանն էր զա թրուպեցցոյի կեանքում, երբ ծաղկում էր նրա տաղանդը, եւ նրա անունը լայն ճանաչում ունէր Ռուսաստանում: Երիտասարդ Կիւրճեանը սիրով «դասուց» առաւ փորձառու քանդակագործից:

1907ին Կիւրճեանը մեկնեց Փարիզ եւ ընդունուեց ժիւլիէնի ակադեմիան: Նրա ինքնուրոյնութիւնը իսկույն նկատեցին դասատուները, որոնց մէջ էր Ֆրանսական ակադեմիայի ակադեմիալ ներկայացուցիչը, քանդակագործ Փոլ Լանտոմպիէր: Քանդակագործ դարձնելու ակադեմիայում պաշտօնական դպրոց մտնելով հանդերձ եմթարկուեց Հրար հերթագայող ուղղութիւնների ազդեցութեանը: Այդ դպրոցի ներկայացուցիչները, յաճախ անհղական կանոններ խախտելով, ընդունում ու իւրացնում էին արուեստի նոր միտումները: Ակադեմիական ուսուցման գործընթացը յատկանշուեց նաեւ ստեղծագործական որոշակի ազատութեամբ: Պահպանուել են 1907-1909 թուականներին՝ ուսումնառութեան տարիներին Կիւրճեանի ստեղծած գործերից մի քանիսը, որ աչքի են ընկնում կենդանի զգացումով, տիկնամիզով եւ արհեստավարժութեամբ:

Ակադեմիայի դէմ ընդվզող եւ մարդկային զգացմունքների տրաման մարմնաւորող Ռոտէնի արուեստն իր դարաշրջանի «մտայնութիւն» էր արտայայտում: Քանդակագործ դարձնելու արուեստը, որ շատ բաներում հակադրուեց Ռոտէնին, ետ թողեց նրան: Կիւրճեանին վիճակուած էր իր ստեղծագործական որոնումներում անցնել մի ուղի, որ բնորոշ էր նրա ժամանակի վարպետներից շատերի համար:

Կիւրճեանի առաջին գործերում զգացում է նրա հրապուրուածութիւնն անտիկ արուեստով, մի հրապուրանք, որ մնաց նաեւ հետագայում: Բայց առայժմ արտայայտուած շարժումն առաւելապէս էքսփրեսիւ ընդթուեց, իսկ ծաւալածեւերը ներթափանցուած էին տպաւորապաշտական, թրթուրեւ մակերեսով: «Հերկ», «Հայ գեղջիկուհիներ» բարձրաքանդակներում, «Գաղթ» համաբնութեան մէջ (10ական թուականների սկիզբ) պարզորոշ հնչում են հայրենասիրական ձգտումները, ուր քանդակագործի ցաւն ու մտահոգութիւնն է զգացում հայրենի երկրի, հարազատ ժողովրդի ճակատագրի համար:

Կիւրճեանի վաղ շրջանի դիմաքանդակներն արդէն ի յայտ են բերում արուեստագէտի հետաքրքրութիւնը անհատի հանդէպ, վերջինիս հոգու բարդ ու բազմակողմանի ծալքերի մէջ թափանցելու նրա ձգտումը: Այդ տարիների իրապաշտօրէն կերպաւորուած եւ նրբօրէն մշակուած դիմաքանդակներն արուեստի Ռոտէնի իմ փերեսիոնիզմի ոգով: Դրանցից լաւագոյնը «Լեւ թուխթոյն» է կամ, ինչպէս կոչուել է սկզբում, «Մտածողը»: Գորողի սպիտակ մարմնակերպում կիսադիրքի ասես իր մէջ է առել նրա ստեղծագործութեան վեհութիւնն ու փիլիսոփայական խորութիւնը: Լուսաստուներային մակերես ստեղծող համարձակ ու աւելանալից մշակման շնորհիւ ձեւերն ասես կենդանութիւն են առել, համակուել տիպարի ոգեշնչուածութեամբ:

աշխատանքը նախորդներին տարբերուեց է նոր յղացքով: Այստեղ կերպի նոր ըմբռնում կայ, որ յատկանշուեց է խոշոր ձեւի որոնմամբ, կոմպոզիցիայի դեկորատիւ եւ կոթողային ընդթու հասանելու ձգտումով: Սա քանդակագործի առաւել տրամաբխ եւ խորհրդաշարժական ստեղծագործութիւնն է: Քրիստոսի կրթոտ ինքնամոռացումով լի կերպարում խոռոկայոյզ ժամանակների արձագանգ է, այդ ժամանակների խելայոյզ պոթիվումն է զգացում: Կիւրճեանը «Քրիստոսի ստուգում» ցանկացել է արտայայտել իր ժամանակի մարդու զգացմունքների համաճոյլ ամբողջութիւնը եւ «բարուխարհային Առաջին պատերազմ: Կիւրճեանը կրկին Ռուսաստանում է, ապրում ու աշխատում է Մոսկուայում: Քանդակագործի ստեղծագործութիւնները նրա կենսագրութեան փուլերի վկաններն են: Կիւրճեանն ակահաւոր մարդկանց դիմաքանդակներ է անում: Փարիզում ծայր առած բարեկամութիւնը Մ. Գորկու հետ շարունակուեց նաեւ Ռուսաստանում: Քանդակագործը վերստին դիմեց մեծ գործի կերպարին, ձգտելով լրացնել-ամբողջացնել իր պատկերացումները դարաշրջանի մարդու մասին:

Կիւրճեանն իր աշխատանքները ցուցադրեց Մոսկուայում ու Փեթերսպուրկում, որոշ ժամանակ ապրեց Թիֆլիսում եւ ստեղծեց նշանաւոր հայերի դիմաքանդակներ:

Ետպատերազմեան կեանքի փորձութիւններին ենթարկուեց նաեւ Կիւրճեանի փարիզեան արուեստանոցը: Այնտեղ մնացած քանդակները փրկելու համար Կիւրճեանը 1921ին մեկնեց Փարիզ: Քիչ ջանքեր չպահանջուեցին տարիներ առաջ Փարիզում սկսուած կեանքը վերսկսելու համար: 1924 թուականից Կիւրճեանը վերստին ֆրանսական բոլոր ցուցահանդէսների մշտական մասնակիցն է: Կիւրճեանի անձնական արխիւում պահպանուել են այն ցուցահանդէսների քաթալոկները, որոնց, սկսած 1910 թուականից մինչեւ մահը, մասնակցել է քանդակագործը:

Քսանակալ թուականներին մշակուեց Կիւրճեան - քանդակագործի տարբեր ժամանակների արուեստների համակողմանի վերաիմաստաւորմամբ արտայայտուած անհատական ոճը:

Չգտելով խորհրդանշական կերպարներ ստեղծել Կիւրճեանն անդադարձաւ հնագոյն սոսոսիւլիների նիւթերուն: Այսպէս, քսանակալ թուականներին երեւան եկան «Ողբ», «Յաղթանակ», «Սալոմէ» համադրումները, «Տիտան», «Լետա» հարթաքանդակները եւ նման այլ գործեր: Յարաբային ոճաւորմամբ ցայտուն յայ աշխատանքները կերպաւորման լուծումով մօտ են միմեանց, սակայն իւրաքանչիւրի ձեւական լուծումը փոխակերպուած է ըստ նրա իմաստային խորքի: Մահաբանի ձեւով կառուցուած «Ողբը» աւետարանական աւանդական մոթիւների տարակերպարումն է: Բայց եւ Կիւրճեանի կերպաւորման մեկնաբանութեան մէջ մարդկային վշտի թեման ժամանակակից հնչողութիւն է ստացել: Համադրումների յուզական համակարգն ստեղծուեց է երկրաչափական խոստապար ձեւերի գծային կշռոյթի գեղանկարչորէն երանգաւորուած մակերեսի շնորհիւ:

Աւելի մեծ ուշադրութիւն անդրելով ծաւալին, Կիւրճեանը հասաւ հոծ գանգուածների ներդաշնակ յարաբերակցութեան: Ուշոր եւ փոքր ձեւերի բազմացնել շարժումն միոթիւնով: Դրանցից մի քանիսը՝ «Երիտասարդութիւն» կամ «Մարմին», «Երիտասարդութիւն» կամ «Ողբ», «Քարիաթիտ», ճշմարիտ կոթողային գործեր են, ուր ձեւերի միակու ու ամուր ընդթու կենսական ուժերի կատարելութեան եւ հաստատուութեան զգացում են առաջ բերում:

Նիւթի բացառիկ զգացողութիւնը, որ յատուկ է Կիւրճեանին, առանձնապէս ի յայտ է եկել այս տարիների աշխատանքներում: Քանդակագործն իր գործերի մեծ մասն անում է կրանիթից՝ վերջինիս մշակման մէջ հասնելով կատարելութեան:

Կիւրճեանի արուեստի խորապէս իրապաշտական սկզբունքը առաւել ցայտուն բացայայտուեց դիմաքանդակում, որ քանդակագործի ստեղծագործական գործունէութեան հիմնական ոլորտն է: Կիւրճեանի դիմաքանդակների նշանակութիւնը սոսկ բուն գործերի պլաստիկական արժէքի մէջ չէ: Նրա դիմաքանդակային արուեստն ասես քսաներորդ դարի հայ ակադեմիական գործիչների կեանքի իւրատեսակ տարբերութիւնն է: Կիւրճեանն իր դիմաքանդակային պատկերաւորումում «միակուրել է» տարբեր մասնագիտութիւնների տէր մարդկանց, որոնք հանգամանքների բերումով ապրել են աշխարհի տարբեր ծայրերում:

Վաղ շրջանի դիմաքանդակների հիմքում ընկած իրապաշտական աշխարհնկարման սկզբունքը Կիւրճեանը պահպանեց մէկընդմիջ, չնայած նրա արուեստը փոփոխութիւններ կրեց ոճական առումով: Դիմաքանդակը Կիւրճեանի գեղարուեստական ժառանգութեան ամենածանրակշիւր մասն է կազմում: Ստեղծագործութեան այս բնագաւառի իրացման մէջ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍ ՄԸ



Լիրանանի ժամանակակից գեղանկարչութեան երէց սերունդի կարկառուն զէմբերէն Յարուսթիւն թորոսեան ծանօթ է նաեւ իրրեւ վաստակաւոր ուսուցիչ: Իր աշակերտ - աշակերտութեան շատեր երախտագիտութեամբ կը լիչեն անոր անունը եւ կը խոստովանին, որ ան ակադեմիական կենսական գիտելիքներ ուսուցանած է իրենց: Արդարօրէն, Յարուսթիւն թորոսեան ակադեմիական կրթութիւնը անհրաժեշտ կը նկատէ գեղանկարի մը յաջողութեան համար, նոյնիսկ եթէ ան վերացական պիտի ըլլայ:

Ընթացքին իրենց ձեռք բերած հմտութիւնն ու փորձառութիւնը անմնաւոր կերպով կը բաշխեն աշակերտներուն եւ ուսանողներուն: Թորոսեան Արուեստանոցի արժանաւոր սաներէն Ղատա Ասսաֆ, Թանիա Ազգի, Թալին Պալեան, Մարի - Իվոնէ Բրոթերո, Ապրտ Շորպա-ժի եւ Սիւզի Չաքէրեան Պէյրութի Ընկերային Հարցերու Զարգացման Ժամէջի: Սենթըր Սոսիոթիլիւիւրեյի մէջ կազմակերպած են խմբային ցուցահանդէս մը, որուն բացումը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 17 Ապրիլի երեկոյեան ժամը 7:00ին: Ցուցադրութեան զրուած գեղանկարները (բանակարներ, դիմանք, կարներ, մերկուհիներ, անկենդան բնութիւններ, եւ այլն) բոլորն ալ իրարմէ որակի քիչ տար-

բերութեամբ ունին գնահատելի մակարդակ: Այս հաստատումը եթէ մէկ կողմէ կը վկայէ մասնափոխութեան օժտուածութեան մասին, սակայն միւս կողմէ ցոյց կու տայ, թէ անոնց ուսուցիչը՝ Յարուսթիւն թորոսեան մէկ կողմէ բնախորհրդի եւ դժուարահաս իր ընտրութիւններուն մէջ, իսկ միւս կողմէ՝ ան լաւապէս կը գործացնէ իր սաներուն երփնազրելու կարողութիւնները:

Այս մէկը առաջինը չէ Յարուսթիւն թորոսեանի կազմակերպած եւ կամ չովանաւորած երիտասարդական ցուցահանդէսներուն վերջինս ալ պիտի ըլլայ, եւ ան պիտի շարունակէ իր մանկավարժական աշխատանքը, իր ստեղծագործական կեանքին զուգահեռ:

Հեղինակաբեկական Ռեպրազաբարոզ Ժառանգորու Մեր

ՎՆԱՍՈՒԱԾ ԴԷՄՔԸ ՊԵՂԵԼՈՎ

ԴԻՍԱՆԿԱՐԻՉ ՍԸ ԿԸ ԳԾԷ ԱՅԼԱՆԴԱԿՈՒՄ ԴԵՄՔԿ
ՀԻՒԱՆԴՆԵՐ: «ՏԸ ՆԻԻ ԵՈՐՔ ԹԱՅԱՑ» ԿԱՆԴՐԱԿԱՌՆԱՅ
ԱՆՈՐ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ



«Հաքին, վիրաբուժական գործողութեան ետք» դիմանկարը կը ցուցադրուի Բրիտանիոյ Դիմանկարներու Ազգային թանգարանի մէջ: Գործ՝ Մարք Կիլլըրթի:

«Երբ կը վերապրիս 10 կամ 12 վիրաբուժական գործողութիւններէ ետք, եւ վիրաբուժք կը հարցնէ, թէ պիտի ուզէի՞ր, որ մէկը դիմանկարդ գծէր, կը պատասխանեմ՝ ա՛յո», կ'ըսէ Հանրի տը Լոթայիմիէրը, «Այժմ վիճակ Գեյլըրդ» (դէմքեր փրկելով) զգայացունց ցուցահանդէսին մէջ պատկերուած աստղերէն մէկը:

Քաղցկեղը կուլ տուած է անոր դէմքին մէկ մասը, որ մէկ կողմ ծռած է, փորուած ու դուրս ցցուած: Անգլիացի փաստաբաններու յատուկ կեղծամով եւ շրջագրեւորով 56 տարեկան այս մարդը կը դիտէ պատուաւն դուրս, ոտքը ոտքին վրայ նստած, աննկուն կեցածքով, առանց ներդաշնակութիւն հայցելու, նոյնիսկ՝ զուարճացած: Կը թուի, թէ ան հանգիստ կը զգայ իր փոխակերպուած կերպարին հետ:

Բոլորովին այլ հարց է, թէ արդեօք ակնդիրը եւս նոյնը կը զգայ, մանաւանդ անդրադառնալէ ետք, թէ այս դիմանկարին կողքին ցուցադրուած պատուաւ կը պատկերէ տը Լոթայիմիէրի գլխուն ներքնամասը վիրաբուժական գործողութեան պահուն, երբ անոր դէմքը կեղծուած է եւ միայն ոսկոր, մկան ու արիւն կ'երեւի: Աւելի մօտէն դիտողը կը տեսնէ մազի թելեր, որոնք թարթիչներ են:

«Այժմ վիճակ Գեյլըրդ» ցուցահանդէսը, որ տեղի կ'ունենայ Բրիտանիոյ Դիմանկարներու Ազգային թանգարանին մէջ, կը պարփակէ սկզբնական դիմանկարի Մարք Կիլլըրթի գեղանկարները, որոնք ակնդիրին կը պարտադրեն դիմանկարի դէմքը այլանդակութեան եւ վիրաբուժական իրականութիւնները:

Կիլլըրթ երկու տարի իրեւ օգնական դիմանկարիչ աշխատած է գեղագիտական գործողութիւններու մասնագէտ Այն Հաչսոնի հետ, որ վիրաբուժական կը սրբագրէ դէմքը՝ ահաբեկող այլանդակութիւններ: Անոր բով կու գային արկածահարներ, գլխու քաղցկեղէ տառապողներ եւ տխրած դէմքով, բերանով կամ կզակով ծնած անծեր:

Կիլլըրթ արտասովոր իրաւասութիւն մը կը վայելէր այն երկու հիւանդանոցներուն մէջ, ուր կ'աշխատէր: Ան ներկայ կ'ըլլար վիրաբուժական գործողութիւններու, որոնք երբեմն աւելի քան 12 ժամ կը տեւէին, եւ որոնց ընթացքին կը լուսանկարէր եւ ճեպանկարներ կը

գծէր: Ան հիւանդները կը գծէր գործողութենէն առաջ, գործողութեան ընթացքին եւ անկէ ետք. աշխատանք մը, որ զինք կը համեստացնէր եւ միաժամանակ կը խանդավառէր, ինչպէս կը բացատրէ ան:

«Իբրեւ դիմանկարիչ՝ արդէն կը գիտակցէի գեղանկարչութեան զայրոյթ պատճառելու կարողութեան», կ'ըսէ ան: Սակայն որոշեցի չչափազանցել՝ կարելի պարկեշտութեամբ եւ շեշտակիորէն արտացոլացնելով հիւանդներուն դէմքերը: Նաեւ որոշեցի դիմել այն անձին կարծիքին, որուն դէմքը կը գծէի: Սովորաբար սակիկ վերջին բանն է, որ դիմանկարիչ մը պիտի ուզէր ընել»:

Կիլլըրթի գծած հիւանդներէն մէկը Հանրի Էքիլի անունով հիւանդապահ մըն է, որ կը տառապի տարածուող քաղցկեղէ, եւ որուն դիմագիծը վերակառուցուած է անոր աջ աչքին, քիթին, այտուկներին եւ վերին ծնօտին վիրահատութենէն ետք: Այլ հիւանդ մը՝ դերասան Քրիս Փալուս իր ձախ աչքը կորսնցուցած է, երբ աւազակախուժ մը պէյսպոլի գաւազաններով յարձակած է անոր վրայ:

Հաչսոնը նման հիւանդներու դիմանկարը գծելու գաղափարը յղացած է պայծառ լոյս մը սփռելու համար ընդհանրապէս վանդակային նկատուած այլանդակ դէմքերու վրայ, նաեւ ցոյց տալու համար դէմքի գեղագիտական գործողութեան կարելիութիւններն ու սահմանափակումները: Ան նաեւ փափաքած է կիլլըրթի շնորհիւ «Երաշխատուկ դէմքեր գծելու առիթ մը», իսկ ամէն բանէ աւելի՝ իր հիւանդներուն ընձեռել ճոզբերանակալ վերընձիզումի պահ մը՝ գեղանկարչական գործընթացի մը եւ աւարտած դիմանկարի մը միջոցով:

Հաչսոնը 2000ին հիմնած է «Այժմ վիճակ Գեյլըրդ» անունով բարեսիրական միութիւն մը, որ կ'օգնէ այլանդակուած դէմքով անձներու եւ նիւթեան արդիւններ կը հայթայթէ յաւելուելու ուսումնասիրութեան համար: Յուցահանդէսը աւելի քան մէկ տարիէ ի վեր կը շրջի Բրիտանիոյ տարածքին: Քննադատները դուրսատած են զայն, որովհետեւ մարդոց կը ստիպէ դիտել այնպիսի պատկերներ, զորս սովորաբար պիտի չուզէին տեսնել:

(ՅԱ.ՊԱՒՈՒԱՄ)

ԽԾԲԾԵԼՈՒ ԹԱԳԱԻՈՐՆԵՐԸ

ՊԱՏԵՐԸ ԽԾԲԾԵԼՈՒ ԱՐՈՒԵՍԸ ԿԸ ՊԱՅՑԱՈՒՑՆԵ ԲԷՅՓ ԹԱՌՆԸ ԵՒ ԱՊՐՈՒՄ Կ'ԱՊԱՀՈՎԷ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐՈՒ: «ՆՈՒԶՈՒԻԷ» ԿԸ ԳՐԷ

Անոնք իւղաներկով եւ փասթիկով չեն աշխատիր, այլ՝ սրակիչ շիշերով խործելով պատերը եւ ստեղծելով արուեստ մը (կրաֆիթի), որ այսօր Քէյփ թաունի նիւթն է: Անոնք իրենց լաւագոյն գործերը աշխատած են գիշերուան մութին, երբ ոչ ոք կը տեսնէ զիրենք:

Քէյփ թաունի արուեստի սիրահարները այժմ չեն կրնար իրենց աչքերը հեռացնել անոնց գործերէն: Քաղաքին մէջ երկար տարածութիւններ ծածկուած են անոնց ճակատային որմնանկարներով, որոնք զօրակցութիւն կը յայտնեն օրինակ, ՄԻՏԱՅի, հիւանդութեան դէմ պայքարող գեղեր հայթայթելու եւ ծխախոտէն հրաժարելու: Պատկերասրահներու սեփականատէրեր սկսած են պատերը խործող արուեստագէտներ հրաւիրել, որպէսզի իրենց գործերը վերստեղծեն պատուարի վրայ: Անոնց ցուցահանդէսները այնքա՛ն ժողովրդականութիւն կը վայելեն, որ ոմանք կրնան իրենց ապուստը ապահովել պարզապէս պատեր խործելով: Մասնագէտներ, առեւտրական ընկերութիւններ, քաղաքական թեկնածուներ, նոյնիսկ արուեստի սեփական հաւաքածոյ պահողներ գործեր կ'ապսպրեն անոնց, երբեմն մինչեւ 10 հազար ուսուր (900 տոյար) վճարելով: Երկրին առաջնակարգ պատ խործող արուեստագէտները՝ Մար 1 եւ Յալքո հրաւիրուած են Աթէնք, շէնքեր որմնանկարելու համար 2004ի ամառնային Ոլիմպիականին առիթով: Անոնք դասախոսութիւններ կու տան համալսարաններու մէջ եւ վերջերս կազմակերպած են «Խործուած պատերու շրջապատում» դէպի Միւնխը ֆոլոյն, ուր գծած են իրենց առաջին որմնանկարները: 21 տարեկան արուեստագէտ թալքոյը Մարքի կը հրատարակէ պատեր խործելու մշակոյթին նուիրուած թերթ մը՝ «Ռիլլայֆ»: Մանթիս անունով արուեստագէտ մը կ'արտադրէ խործուած պատերու վրայ արձանագրուած ստորագրութիւններով շապիկներ եւ տարատներ: «Էպ» անունով արուեստագէտ մը վերջերս պատուատած է պատեր խործելու արուեստին նուիրուած վաւերագրական ժապաւէտ մը:

Հետեւաբար ցնցիչ էր լուրը, երբ երկու ամիս առաջ քաղաքային իշխանութիւնները չիլիներ եւ շահարկողներ ներգրաւելու յոյսով յանկարծ վճռած են, թէ պատեր խործելը, որ մեծ մասամբ հակակիրէ դուրս ելած էր, հաճելի պատկեր մը չի պարզէ: Նոր օրէնքներու կրթական, պատ խործող արուեստագէտ մը կրնայ մինչեւ 180 տոյար տուգանքի ենթարկուիլ եւ բանտարկութեան դատապարտուի: «Կարծես, որ նոր օրէնքները ծայրայեղ են եւ անարդար», կ'ըսէ Քիլլըրթը Օգոստոս, որ ձեւագիտութիւն կը դասուանդէ: Բազմաթիւ

արուեստագէտներ մեծ ճիգ կը թափեն հսկայական եւ գեղեցիկ ժողովրդային որմնանկարներ գծելու համար: Օգոստոս առաջին ձեռքակալուողներէն էր. ան «Ազատեցիք արուեստը» բառերը խործած էր պատի մը վրայ:

Պատեր խործելու արուեստը Քէյփ թաունի ըստմասշտաբ ընկերութեան մէջ սկիզբ առած է 1980ական տարիներուն: Պատկերասփուռն Նիլ Եոքը քաղաքին շէնքերուն վրայ եւ փասթիկներուն մէջ խործուած պատկերներ տեսնելով՝ երիտասարդ արուեստագէտներ ստեղծեցին իրենց յատուկ դրոշմը: «Ափրիկէի ցեղային խորականութեան ժամանակներուն արուեստի դասընթացները չկային մեր զարոյացումներէ մէջ», կ'ըսէ Յալքո: Հետեւաբար որեւէ վարժութիւն կամ ներկի տեսակներ չունէինք, սակայն կ'ուզէինք գեղեցկացնել մեր միջավայրը»:

Այսօր պատեր խործելու արուեստը տարածուած է դէպի քաղաքին հարաւային բարեկեցիկ արուեստանոցներ եւ հետզհետէ ժողովրդականութիւն կը վայելէ երկրին տարբեր շրջաններուն մէջ: Քէյփ թաունի ամէնէն հոշակաւոր արուեստագէտները՝ Մանթիս եւ թալքոյը Մարքի սպիտակամորթ են: «Քէյփ թաունի մէջ պատեր խործելու արուեստը միակ բանն է, որուն գնահատումը կը կատարուի բացառապէս արուեստագէտին կարողութեան հիման վրայ», կ'ըսէ Մարքի:

Նոյնիսկ պատեր խործելու արուեստին ամէնէն բուն ընդդիմադիրները կը զգուշանան նման արուեստագէտներու որմնանկարները քննադատելու: Իշխանութիւնները կը փորձեն որմնանկարները գատորոշել պատերուն վրայ արձանագրուած ստորագրութիւններէն, որոնք կը խաթարեն քաղաքին դիմագիծը: Թէեւ անոնք կը յուսան արմատախիլ ընել պատերուն վրայ անճոռնի ստորագրութիւնները, սակայն չեն ուզեր բոլորովին արդիւն որմնանկարչութիւնը:

Ոմանք համոզուած են, որ քաղաքին պատասխանատուները պատեր խործելու դէմ արշալի մը ձեռնարկած են, պարզապէս որովհետեւ անկարող են դիմակայելու Քէյփ թաունի աւելի մեծ հարցերը, ինչպէս՝ աղքատութիւն, անպատասպարներու վիճակ եւ ոճրագործութիւն: 6 ամիս առաջ արուեստի խորագիր Ռոնոլ Լուքէյ պատեր խործող 3 արուեստագէտներու որմնանկար մը ապսպրեց իր տան ճակատի պատին համար: Անոր դրացիները բողոքեցին մը յիշեցին քաղաքային խորհուրդին: «Իրացիներս կ'ըսեն, թէ ոճրագործութիւնը կը քաղաքի մը շրջանին մէջ», կ'ըսէ ան: Անոնք այնքան կը սարսափին երիտասարդները տաքնապէսըրը ըսն հարցերէն, որ նման փոքր բաներու վրայ կը կեղորոնանան: Կը թուի, թէ ինչպէս բոլոր արուեստները, պատեր խործելու արուեստին գրաւչութիւնը եւս կախեալ է զայն «դիտողին աչքէն»:

(ՅԱ.ՊԱՒՈՒԱՄ)

ԱՐՈՒԵՍԻ ԽՈՐՈՒԹԻՒՆԸ՝ ՄՈՐԹԻ՞Ն ԶԱՓ

ԼՈՆՏՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԾՈՒԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՍԷՋ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՍԸ ԿԸ ՊԱՏԿԵՐԷ ԿԻՏԱՑՆԵՐՈՒ ԱՆԺԱՄԱՆՑԵԼԻ ԳՐԱԴՉՈՒԹԻՒՆԸ: «ԹԱՅԱ» ԸՄԲԱԹԱԹԵՐԹԸ ԿԸ ՆԿԱՐԱԳԵ

Անձնական պատմութիւն մը մորթի վրայ կիտելու սովորութիւնը նոյնքան հին է, որքան մարդկութիւնը, սակայն մինչեւ վերջերս արեւմտեան մշակոյթին մէջ անիկա կ'առնչուէր ծովագնացութեան, ոճրագործութեան կամ պոռնկութեան: Այսօր կիտուածը կ'ապրի վերածնունդի շրջան մը:

«Սքին տիփ» վերնագիրով ցուցահանդէսը, որ տեղի կ'ունենայ Լոնտոնի Ազգային Մովային թանգարանին մէջ, մինչեւ 30 Սեպտեմբեր, կը վերակառուցէ կիտածին պատմութիւնը արեւմտեան արդի մշակոյթին մէջ: Անիկա կը սկսի Փոլինեզիայէն, ուր ծնունդ առած է եւ կը հասնի մինչեւ մեր օրերու նորաձեւութեան աշխարհը: «Կիտածը որեւէ ժամանակէ աւելի ընդունուած է արեւմտեան մշակոյթին մէջ», կ'ըսէ ցուցադրուած գործերուն պատասխանատու: Յիմաի կիտածը կը համարենք ժխտական բան մը, սակայն մենք կը փորձենք յայտնաբերել անոր դրական կողմը»:

Կ'ենթադրուի, որ նախապատմական շրջանի մարդը հաւանաբար բժշկութեան նպատակով իր մորթը կը կիտէր ներկի մէջ թաթիլուած կոպիտ գործիքներով, որոնք անջնջելի հետք կը ձգէին: Աշխարհի տարբեր վայրերուն մէջ յայտնաբերուած են զարդարուն կիտածներով մոմիաներ: Սակայն կիտածը դատապարտուած է գրեթէ այնքան ժամանակէ ի վեր, որ գոյութիւն ունի: Հռոմէացիք զարդարանքի համար մորթը կիտելը բարորարութիւն կը համարէին. նախատինք մը, որ մինչեւ այսօր ակներեւ է լատիներէն սքինլիմ (խարան) բառին մէջ, որ կը նշանակէ կիտած: Հռոմէացիք զայն կը գործածէին գերիներն ու ոճրագործները խարանելու համար: Թէեւ կիտածը խոր պրոֆեսիոն ունի հնագրանքի մշակոյթներուն մէջ, սակայն 1768ին սովորութիւնը անհետացած էր Եւրոպայի մէջ, երբ բրիտանացի ծոցագնաց նաւապետ Ջէյմզ Քուքը ճամբայ ելած է դէպի Փոլինեզիան կղզիներ: Հոս է, որ կը սկսի «Սքին տիփ» ցուցահանդէսին պատմութիւնը:

Թէեւ Քուքի եւ անոր նաւագնորդներն զէպի Ովկիանիա ծովագնացութենէն առաջ այլ եւրոպացիներ եւս հանդիպած էին տեղւոյն ժողովուրդներուն մարմինը կիտելու սովորու-

թեան, սակայն անոնք առաջինն էին, որոնք կանոնաւոր արձանագրութիւններ պահած են այդ մասին: Մովագնաց արուեստագէտ Սիտոնի Փարքինսընը ուշագրաւ գծանկարներուն շնորհիւ, արեւմտեան աշխարհը առաջին անգամ ըլլալով ծանօթացաւ Նաղաղական կղզիաբնակ ժողովուրդներուն մանուածապատ զարդապատկերներուն: Նոր Զելանդիայի բնիկ ցեղախումբերը՝ մարոնիները ընտանեկան շառաւիղներու եւ անձնական պատմութիւններ կը գծէին դէմքերու վրայ: Թահիթիցիները իրենց ամբողջ յետոյքը կը զարդարէին կիտածով: Քուքը թահիթերէն «թաթու» բառը ներմուծած է անգլերէնէն մէջ:

Այս ծովագնացները հմայուած էին: «Իրենց համար կիտածը բոլորովին նոր բան մըն էր, կ'ըսէ Լոնտոնի համալսարանէն մարդաբանութեան դասախոս մը Նիքոլըս Թամբը: Անոնք զարմացած էին ի տես մարդոց, որոնք կը դիմանային կիտածին պատճառած ցաւին»:

Թանգարանին մէջ կը ցուցադրուին կիտածի հին գործիքներ, որոնք շինուած են տաշուած ոսկորներէ. անոնք շատ հեռու են այսօրուան կիտածի ելեկտրական գործիքներէն, որոնք մեկանը բարակ սասնով կը ներարկեն մորթին մէջ:

Քուքի ընկերակիցները չեն յաջողած լիովին ըմբռնել կիտածին կարեւորութիւնը Ովկիանիայի սովորները անցնումի ծիսակատարութիւն մըն էին, միաժամանակ՝ ոգիներու աշխարհին եւ երկրաւոր թշնամիներու դէմ կայն նաւագնորդ աւելի հետաքրքրուած էին իրենց մարմնին վրայ կիտածներ ունենալով: «Կիտածը օրինակ մըն է, որ ցոյց կու տայ, թէ ինչպէս փոքր եւ հեռուոր հաւաքակառութիւն մը հզօր ազդեցութիւն գործած է եւրոպական մշակոյթին վրայ», կ'ըսէ Թամբը: Ասիկա ար-

մատական փոփոխութեան ենթակից եւրոպացիներուն մարմինը:

Նաւագնի մեծ խանդավառութեամբ որդեգրած են սովորութիւնը եւ ծովագնացութիւնը խորհրդանշող զարդապատկերներ կիտած են իրենց մարմնին վրայ: Կրիպի պատկերը կը նշանակէր, թէ նաւագ մը կտրած էր միջօրէականը, խարիսխի պատկերը՝ դէպի Ատլանտեան ուղեւորութիւն մը: Նաւչելութեան տեսարանները եւս ժողովրդականութիւն կը վայելէին: Ոմանք բրածեծ ըլլալու վտանգին խոյս տալու սին փորձով մը կը հաւատարկէին, թէ ոչ ոք պիտի համարձակէր խարազանի Քրիստոսի պատկերը: Շուտով կիտածը մարմնի մը ստեղծած էր նաւահանգիստներու մէջ: Ամերիկայի ծովուփին նաւագներուն 90 առ հարիւրը կիտած մը կը կրէր: «Անոնք անձնական յուշանշաններու կը նմանէին նաւագներուն մարմնին վրայ», կ'ըսէ ցուցադրուած գործերուն պատասխանատուները՝ Ճիլզոյն այնպէս, ինչպէս էյֆէլի աշտարակին մանրակերտը կամ բացիկ մը պիտի գնէինք այսօր: Կիտելու սովորութիւնը վատահամբաւ էր, որովհետեւ ծովագնացներու ստորին դասակարգին մշակոյթին բարձրանալով տարածուած էր նաւահանգիստ քաղաքներու արուարձաններուն մէջ, որոնք երկար ժամանակ կ'առնչուէին ոճրագործութեան եւ պոռնկութեան հետ: «Կիտողի մը կրպակը յարմար վայր մը չէ ամէն մարդու համար», կ'ըսէ ցուցադրուած

գործերուն պատասխանատուներ:

Սակայն երբ մարմինը կիտողներ կրպակներ բացին աւելի մեծ քաղաքներու մէջ եւ սակդին յայտնագործութիւնը նուազ ցաւատանջ գործընթաց մը վերածեցին կիտելու, մտնեցումներու փոխանցանք: Իրօք, կարճ ժամանակի մը համար անոնք նորաձեւութիւն դարձան Անգլիոյ վերնախաւին մէջ. Եոքը դուրսը (հետագային՝ ձորձ Դ. Թագաւորը) 1882ին վիշապի մը պատկերը կիտելու սուած էր իր թեւին վրայ, ինչ որ ներշնչած էր բարձր դասակարգի անգլիացիները: Նորաձեւութիւնը որդեգրած են ձէնի Չըբըլի նման կիտողներ (Ռիչարդս Չըբըլի մայրը), որ օձի մը պատկերը կիտած էր դաստակարար վրայ եւ զայն կը ծածկէր ապարանջանով մը:

Այսուհանդերձ «միշտ այլ ժխտական բաներ առնչուած են կիտածին հետ», կը բացատրէ Թամբը: Միայն վերջին 20 տարիներէն է, որ մտնեցումը յատկանշական փոփոխութիւն մը կրած է: Ան կը գնահատէ կիտածի ժամանակակից վարպետները, որոնք ընդունելի զարդապատկերներ կը կիտեն, մաքրութեան չա-

(ՅԱ.ՊԱՒՈՒԱՄ)



Նաւագներ 19րդ դարուն կիտածներ կ'օգտագործէին աշխարհի շուրջ կատարած իրենց ձայնորդութիւնները պատմելու համար:

Պատրաստեց
Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՄՐԱՊԵԱՆ

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՅԱԿՈՒՐ...

Շարունակուած՝ 6րդ էջէն

Քանդակագործի հնարաւորութիւնները պակաս սահմանափակ են եղել, իսկ բնութագրումներին շատերում բացառապէս են նրա վարպետութեան նորանոր կողմերը: Կիրճեանի ստեղծած միւս բոլոր գործերը, հագուելու բացառութիւններով, ըստ էութեան մնացել են որպէս նրա արուեստանոցի դուրս չեկած քանդակագործական զաղափարներ ու յղացումներ: Քանդակային ստեղծագործութեան ղեկարարութիւնները պայմանաւորուած են այդ արուեստի բնույթով իսկ, արուեստ, որ պահանջում է մարմնական եւ նիւթական մեծ ծախսումներ, իսկ կոթողային յղացումները մարմնաւորումն ու իրացումը կապուած են պաշտօնական պատուէրի հետ: Մայրն ասել է. «Ձէ որ քանդակն էլ է բրուտագործութեան նման. այն պէտք է ստեղծուի ինչ - որ բանի համար: Պատճառներին մէկն էլ դա է, թէ ես ինչու եմ այս խոշոր արձաններն անվճար անում տեղիս շրջանի համար: Յամենայն դէպս, դրանք կը ծառայեն իրենց նշանակութեանը»:

Կիրճեանի կոթողային նախագծերին վիճակուած չէր իրացուել, սակայն, նրա դիմաքանդակային ժառանգութիւնը նոր էջ բացեց հայ արուեստի բազմադարեան պատմութեան մէջ:

Կիրճեանի ստեղծագործութիւնները, որ տեղ են գտել Հայաստանի պետական պատկերասրահում եւ Հարստացրել նրա հաւաքածուն, դարձել են նոր ժամանակների հայ կերպարուեստի անկապտելի մասը:

ԱՐՈՒՅՍԻ ԽՈՐՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած՝ 7րդ էջէն

Քանդակները կը յարգեն եւ կը շրջեն մարդկային մարմինն նկատմամբ մեր մտեցումը: «Մարդիկ սկսած են մտածել մարմինը փոխելու մասին: Անոնք մարմինը կը նկատեն պաստառ մը իրենց արուեստի սեփական գործերուն համար», կ'ըսէ Թամար:

«Այսօր ամէն տեսակի մարդիկ կ'ուզեն կիտած մը ունենալ, - կ'ըսէ Բրիտանիոյ «Թաթու Բլապ»-ին ղեկավարը: - 1970ական տարիներուն, երբ սկսած մարմիններ կ'իտել, տարին 2 կամ 3 կիտեր կ'ապրէին: Այսօր օրական 2 կամ 3 կիտեր կու գան կիտելու իրենց մարմինը: Պատկերներ կ'իտած եմ նոյնիսկ Օքսֆորտի համալսարանին դասախօսներուն մարմինի վրայ»:

Թէեւ կիտելու արուեստը եկած է հեռաւոր մշակոյթներէ եւ պատշաճեցում է արեւմտեան ճաշակներու, սակայն կիտած մը ունենալու դրդապատճառները գրեթէ չեն փոխուած: «Յաճախ ֆուլթայրի խոճերու խորհրդանիշներ կը կիտենք յատուկ, - կ'ըսէ վարպետ կիտող Ալէքս Պինի: - Տղամարդ մը կ'ընայ երեք անգամ ամուսնալուծուելու եւ վերածնունդն ալ, սակայն իր ամբողջ կեանքին ընթացքին կը մնայ Արսենալ խումբին համակիր մը: Արսենալի մէկ խորհրդանիշը կ'իտելը ցեղախմբային պատկանելիութիւնն ապացուցելու պէս բան մըն է... Հետեւաբար անիկա անքան ալ տարբեր չէ մտորի ռազմիկներու մարմինը կ'իտելու մղումէն»:

ԿԸ ՆՈՒՒՐԵՆ

● Ժիրայր Եագուլ-Եանի մահուան առիթով՝ փոխան ծաղկեպսակի Ս. Յակոբ Եկեղեցւոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները:

Տէր եւ տիկին Մաւրուէլ Մաւուէլեան 10,000 լ.ո., տէր եւ տիկին Յակոբ Մաւուէլեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Ջաւէն Զոքարեան 20,000 լ.ո., Պալեան Անթուան 20,000 լ.ո., Մկրտիչ Զեհեւան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Տիգրան Գաբրիէլեան 20,000 լ.ո., Պետրոս Խարոնեան եւ ընտանիք 20,000 լ.ո., Լարֆուշեան ընտանիք 10,000 լ.ո., Չիլիկիւրեան հաստատութեան պաշտօնէին 200,000 լ.ո.:

● Նոյն առիթով, ԼՕԽի «Կարս» մասնաճիւղի եղած են հետեւեալ նուիրատուութիւնները:

Տէր եւ տիկին Յակոբ Ալլըզեան 25,000 լ.ո., ԼՕԽի «Կարս» մասնաճիւղի վարչապետ ընկերուհիներ 50,000 լ.ո.:

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.

GENERAL ELECTRIC

Եւ զանազան վաճառանիշով եւ չափերով սարնառաններ

Պուրճ Համուտ - քաղաքապետարանի հրապարակ
ՀԵՌԱՉԱՅՆՆԻ 01-241000
Հրդ մուտք, Սանթր Պաղարայն: Կառատուրդ ապահովուած:

PHOTO RAFFI

Լուսանկարչական արագ, ապահով եւ մատչելի սպասարկութիւն բոլոր առիթներու համար

❖ DIGITAL ԵՎ ԱՐԱՎԱՆՈՒՄ ԵՎ ՎԻՏԵՕ - ԵՐԻՉ
❖ ԲԱՐՁՐՈՐԱԿ ԵՎ ԱՐԱՎԱՆՈՒՄՆԵՐ

Միակ հասցէ. - Պուրճ Համուտ, Լ. եւ Ս. Յակոբեան քաղ, 49/161: Հեռ. 03 / 703181
E-mail: photoraffi@hotmail.com

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումի բնագիրը ընթացումի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

ԿՈՒՉՈՒԻ

● Թոնոյի գործատեղի մը կարիքը ունի օգնական աշակերտի մը: Հեռ. 01-582218:

STUDIO Lantern

● Կը ստանձնէ ուրախ առիթներու video ցկարահանումներ

Հեռ. 01-266866
Եւ 03-695399

We Give Services. ... Not Just Policies.

ԱՅՏԻԼ AFHIL

Աֆիլ Սթր. Բ. Յարկ, 766. Եւ Յաֆու. (01) 262231 242556 242557
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231 - 242556 - 242557

FOR THE SAKE OF OUR HEALTH AND YOURS
DON'T SMOKE

FOR THE SAKE OF OUR NERVES AND YOURS
KEEP SILENT

WATCH OUT! BABY ON BOARD

FOR THE SAKE OF OUR NERVES AND YOURS
DRIVE SAFELY

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)

Եթէ ուսանող էք, հետեւեցէք ձեզի արուած խրատներուն, որովհետեւ անպարանք ժխտական արդիւնք պիտի տայ: Իսկ եթէ պաշտօնեայ կամ պարզ աշխատուոր էք, ձեր գործերը կատարեցէք բծախնդրութեամբ:

☆ **ՑՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Ամէն օր վեարուժներ կ'ընէք, անարդար պարտամուրհակներ կը ստորագրէք: Բայց ո՞վ որ իր պարտքը կը վճարէ, կը հարստանայ: Այսպէս կ'ըսէ իմաստութիւնը:

☆ **ԵՐԿՈՒՇԱՐԹԻ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Ամուսնական ձեր կեանքը երբեմն կ'ուցենայ թիրմացուրթիւններ: Այսօր անհասկացողութիւն մը կը կրնայ խոռովել օրուան անդորրը: Կարեւորութիւն մի՛ տաք ըսի-ըսուներու:

☆ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Ձեր աշխատանքը պիտի չտայ ձեր ակնկալած արդիւնքը: Այսուհանդերձ, պիտի ստեղծուին նոր պատեհութիւններ եւ կարելիութիւններ:

☆ **ԱՌԻՒԹ** (23 Յունիսէն 23 Օգոստոս)

Խնդիր մը կը կրնա ունենալ ձեր գաւակներուն հետ, որոնք, ըստ ձեզի, բիչ մը անկախ ապրիլ կ'ուզեն: Նոյն ատեն ուշադիր եղէք, որ շատախօս մարդ մը ձեզ չխաբէ իր անուշ լեզուով:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Եթէ կ'ուզէք փոխել ձեր բնակավայրը եւ հաստատուիլ ուրիշ քաղաք մը, պէտք է առնէք հաւանութիւնը ձեր կողակիցին կամ աշխատանքի ընկերոջ: Այս հարցը բիչ մը դժուար պիտի ըլլայ իրագործել:

☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Հաւանաբար կատարէք կարեւոր քայլեր: Եթէ մտադրուիք մը կամ տեղափոխութիւն մը, որմէ չէք խորհիր: Բայց մի՛ արտեղիք կամ ղեկավարի, որովհետեւ ձեր շիրտը հարցը կրնայ շահաբեր ըլլալ:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Ամուսնական արարտիք դրամի նեղութիւն կրնա ունենալ: Եթէ պարտքեր ունիք, նախ վճարեցէք առաջնահերթը, ապա միւսները: Խնայասէր եղէք:

☆ **ԱՂԵՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Յատուկ դիրք եւ կողմնորոշում չունիք. ձեր շուրջինները կը կարծեն, թէ անկեղծ չէք եւ կ'ուզէք օգտուիլ երկու կողմերէն: Պարզեցէք ձեր դիրքը:

☆ **ԱՅԾԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Կեդրոնացաւու զոտարկութիւն ունիք, որովհետեւ հարց մը կը մտահոգէ ձեզ եւ չէք կրնար ձեր պատասխանը տալ: Մնացէք իրատես եւ եղբ կորովի:

☆ **ՇՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Շատ ծրագիրներ ունիք, բայց չէք կրնար գտնուիլ իրագործել ձեր ուզած ձեւով: Այս րեւոյթը ձեզի չի պատշախիտ, ուրեմն ինքնաքննութեամբ մը կեցւածք որդեգրեցէք:

☆ **ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Ձեր գործին վերաբերեալ տեսակցութեան մը ընթացքին մնացէք հանգաբար, որովհետեւ ոմանք կը նախանձին ձեզի եւ կ'ուզեն խախտել ձեր դիրքը:

ՕՐԱՏԵՏՐ

ԼԵՈՒՏԵՍԻԼ

Panasonic

10:00. - Մապահօ
13:00. - Մաքուլ
14:00. - Եւրոնիւզ
14:30. - Լուրեր
15:00. - Մըն Եսուս
16:30. - Ազան
17:00. - Ամերիկեան
18:00. - Կենդանի
19:30. - Լուրեր
20:00. - Արաբական
21:00. - Թորթի Ռիթմ
22:00. - Ամերիկեան
23:00. - Մէլբորն Էքս

10:00. - Մապահօ
13:00. - Մաքուլ
14:00. - Եւրոնիւզ
14:30. - Լուրեր
15:00. - Մըն Եսուս
16:30. - Ազան
17:00. - Ամերիկեան
18:00. - Կենդանի
19:30. - Լուրեր
20:00. - Արաբական
21:00. - Թորթի Ռիթմ
22:00. - Ամերիկեան
23:00. - Մէլբորն Էքս

10:00. - Մապահօ
13:00. - Մաքուլ
14:00. - Եւրոնիւզ
14:30. - Լուրեր
15:00. - Մըն Եսուս
16:30. - Ազան
17:00. - Ամերիկեան
18:00. - Կենդանի
19:30. - Լուրեր
20:00. - Արաբական
21:00. - Թորթի Ռիթմ
22:00. - Ամերիկեան
23:00. - Մէլբորն Էքս

10:00. - Մապահօ
13:00. - Մաքուլ
14:00. - Եւրոնիւզ
14:30. - Լուրեր
15:00. - Մըն Եսուս
16:30. - Ազան
17:00. - Ամերիկեան
18:00. - Կենդանի
19:30. - Լուրեր
20:00. - Արաբական
21:00. - Թորթի Ռիթմ
22:00. - Ամերիկեան
23:00. - Մէլբորն Էքս

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5135

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՍԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ԵՐՈՒՋՈՒՄԱԿԱՆ

- Ապակեթուղթ:
- Վահրամ Մովսէսյանի «Անկապ...»
- Բոլորովին մերկ - Լյուտի աղեղ:
- Մտքով սնանկանալ, դատարկանալ:
- Եւրոպական երկիր - Հասկցիր:
- Ամուսնացած կին - Երկրորդ անգամ:
- Իզական օտար անուն - Նեղ բացուածք:
- Տայիբուր:
- Համար - Պլէճ, զոմէշի ձագ:
- Ժամանում - Սաթենիկ թագուէրին ցեղը - Այրուբենէն:
- Մէկտեղ - Տիկի, արտատեր եւ խոշոր ծառատեսակ:

ՈՒՂՈՒՄԱԿԱՆ

- Արգատ - Չար ոգի - Առաջնորդի վիճակ:
- Առաքել - Կիտուած:
- Լուսնի բակ - Մեր կին:
- Մարտիկ, մրցող - Յուսկան անձական:
- Եւրոպական մայրաքաղաք - Սպանացի ղեկավարիչ:
- Յարաբերական դերանուն - Յարսուական քաղաք - Գիւղաքաղաք:
- Սեմական ժողովուրդի մը վերաբերեալ:
- Ափրիկեան երկիր - Փոխադարձ դերանուն:
- Պողտուու ծառատեսակ - Անվթար:
- Ճաշասեղանի սպասներէն - Անհատատ:
- Տիւ ու գիշեր - Անջրպետի առաջին շուր - Տարիք:


ԹԻՒ 5134

ԽԱՉԲԱՌԻՆ


ԼՈՒԹՈՒՄ

* Վերոյիշեալ յայտագիրները ենթակալ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններով:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ 4 ԿԵՏ ԵՏ ՄՆԱՑ ՎԱԼԵՆՍԻԱՅԵՆ

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 36րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Վալենսիա մեծ քալ մը առաւ դէպի տիտղոս, երբ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Էսփանիոլը: Իր արձանագրած այս յաղթանակէն ետք անիկա չորս կէտի առաւելութիւն մը ունեցաւ իր անմիջական մրցակիցին՝ Ռէալ Մատրիտի վրայ, որ 3-0 արդիւնքով ծանր պարտութիւն մը կրեց Ռէալ Սոսիեդադէի դաշտին վրայ (14րդ):

Ստորեւ՝ 36րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Տեփորթիօ Քորուս - Մալալա	2-2
Օսասունա - Լաս Փալմաս	3-2
Ռայօ Վալեքանօ - Աթլետիքօ Պիլաո	4-2
Մալորքա - Ռէալ Պեթիս	1-3
Ռէալ Սարակոսա - Սելթա Վիլո	0-1
Սեիլլա - Ալաւես	2-0
Թեներիֆէ - Ռէալ Վալադոլիտ	1-5
Պարսելլոնա - Վիարէալ	4-1
Ռէալ Սոսիեդադէ - Ռէալ Մատրիտ	3-0
Վալենսիա - Էսփանիոլ	2-1
ԳԱՍՏԱՌՈՒԹՄ	ԿԵՏ
1.- Վալենսիա	69
2.- Ռէալ Մատրիտ	65
3.- Տեփորթիօ Զորուս	62
4.- Սելթա Վիլո	60
5.- Պարսելլոնա	60
.....
18.- Մալորքա	39
19.- Ռէալ Սարակոսա	36
20.- Թեներիֆէ	35

ԲԱԼՉԻՕ

ՍՈՒՐ ՊԱՅՔԱՐ՝ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Իտալիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Քալչիօ) 33րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումներուն, առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը՝ Ինթեր Միլան, Եուվենթուս եւ Ա. Էս. Ռոմա յաղթանակներ արձանագրելով մնացին

իրենց դիրքերուն վրայ: Այդ մէկը պատճառ դարձաւ, որ յաջորդաբար չորրորդ տարին ըլլալով ախոյեանին ճակատագիրը վճռուի վերջին հանգրուանի մրցումներէն ետք միայն:

34րդ հանգրուանի մրցումներուն, անոնք երեքն ալ իրենց մրցումները պիտի կատարեն օտար դաշտերու վրայ: Ինթեր հիւրը պիտի ըլլայ Լացիօ Ռոմայի, Եուվենթուս՝ Ուտինէպէի, իսկ Ա. Էս. Ռոմա՝ Թորինոյի:

Շաբաթավերջին տեղի ունեցած մրցումներուն, Ա. Էս. Ռոմայի եւ Եուվենթուսի արձանագրած յաղթանակներուն մէջ (երկուքն ալ՝ 5-0) իրենց մեծ բաժինը ունեցան Վինչենցօ Մոնթելա (Ա. Էս. Ռոմա) եւ Տալիտ Թրեպպէ, որոնք հէթրիք իրագործեցին:

Ստորեւ՝ 33րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Աթլանթա - Փերուճիա	2-1
Պոլոնիա - Լացիօ Ռոմա	2-0
Ֆիորենտինա - Փարմա	1-2
Ինթեր Միլան - Փիաչենցա	3-1
Եուվենթուս - Պրեշիա	5-0
Լեչէ - Ուտինէպէ	1-2
Ա. Էս. Ռոմա - Քրեմո Վերոնա	5-0
Վենետիա - Թորինո	1-1
Վերոնա - Ա. Սէ. Միլան	1-2

ԳԱՍՏԱՌՈՒԹՄ

1.- Ինթեր Միլան	69
2.- Եուվենթուս	68
3.- Ա. Էս. Ռոմա	67
4.- Ա. Սէ. Միլան	52
5.- Պոլոնիա	52
.....
15.- Պրեշիա	37
16.- Լեչէ	28
17.- Ֆիորենտինա	22
18.- Վենետիա	18

Հ.Ս.Ը.Մ.Ի

ՖՈՒԹՊՈՒԼԻ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հ.Ս.Ը.Մ.ի համակիրներու յանձնախումբը Հ.Ս.Ը.Մ.ի ֆուտպոլի սիրահարները կը հրաւիրէ արտօբաց վրոյց - հանդիպումի մը՝ խումբին պատասխանատուներուն եւ կրտսեր խումբերու մարպիչներուն հետ:

Հանդիպումը տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 30 Ապրիլ Երեկոյեան ժամը 8:00ին, ԱԿԳ. Լ. եւ Ս. Յակոբեան քոլեճի արահին մէջ, Պուրճ Համուտ:

● Բոլորիդ ներկայութիւնը խիստ փափաքելի է:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

- ՆԸԺՄԷ ԳՐԱԷՑ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐԸ

- Հ.Ս.Ս. ԶՈՐ ԳՆԱՑ ԻՐԱԿԱՐԱՐԻՆ ԱՆԱՐԴԱՐ ՍՈՒԼԻՉԻՆ

Լիբանանի ֆուտպոլի ախոյեանութեան 23րդ հանգրուանին, Հ.Ս.Ը.Մ., որ Շաբաթ օր Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ կը ճակատէր Ախա Ալիի Ալեյի դէմ, 0 - 0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց: Այսպէսով, Հ.Ս.Ը.Մ. արձանագրեց եղանակի իր վեցերորդ հաւասարութիւնը, ունեցաւ 9 կէտ եւ իր ունեցած յարաբերաբար աւելի նպաստաւոր կոլէկտիւնը շնորհիւ յաջողեցաւ գերազանցել Ալիի Սալտան, որ 4 - 0 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Սալամէն, նահանջեց նախավերջին դիրքը:

Շաբթուան գագաթի ճակատումը, որ տեղի կ'ունենար Թրիփոլիի մէջ, Թատամոն Սուրի եւ Սաժէսի միջեւ, վերջ գտաւ հարաւի կազմին յաղթանակով՝ 3 - 1: Իր կրած այս պարտութենէն ետք Սաժէս կորսնցուց պարագլուխի դիրքը եւ նահանջեց 2րդ դիրքը: Պարագլուխի դիրքը գրաւեց Նրժմէ, որ Մարպակիան Աւանի դաշտին վրայ 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Սաֆան: Նրժմէ այժմ մէկ կէտով կը գերազանցէ Սաժէսը, մինչ ախոյեանութեան աւարտին մնացած է երեք հանգրուան:

Այսպիսով, Սաժէս կրեց եղանակի իր երկրորդ պարտութիւնը, մինչ Նրժմէ եւ Թատամոն Սուր կրած են մեկական պարտութիւն:

Վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Հ.Ս.Ս. (11րդ) 1 - 1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց: Իրաւի մէկ դիրք վեր գտնուող Ախտի հետ, մնաց նոյն դիրքին վրայ, չորս կէտով ետ մնալով անկէ: Հ.Ս.Ս. զոյի դարձաւ օրուան իրաւարարին անարդար սուլիչին: Բացաւ յայտ էր անոր կողմնակալութիւնը, որ արդար յաղթանակէ մը կրկեց հայկական կազմը: Անարդար փենսյալի մը՝ ի նպաստ Ախտի, Հ.Ս.Ս.ի «մաքուր»

կոլ մը չէղեայ համարեցաւ անձանօթ պատճառով, Հ.Ս.Ս.ի վաղեմացաւ փենսյալի մը, իսկ Հ.Ս.Ս.ի աստղը՝ Համլէթ Միխթարեան կարմիր քարտ ստացաւ, բացալայտօրէն ալ հաշիւներով: Իրաւի անօթ է նման ընթացք, ինչ որ յաւելեայ հարուած մը կու տայ արդէն իսկ տառապեայ լիբանանեան ֆուտպոլին:

Վերջին դիրքը գրաւող Ռասիկ, որ միակ խումբն ըլլալով ցարդ յաղթանակ չէ կրցած արձանագրել, կրեց եղանակի իր 17րդ պարտութիւնը՝ Շապար Սահէլէն, 5 - 1 արդիւնքով:

Ստորեւ՝ 23րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Շապապ Սահէլ - Ռասիկ	5 - 1
Ախտ - Հ.Ս.Ս.	1 - 1
Հ.Ս.Ը.Մ. - Ախա Ալեյ	0 - 0
Սաֆա - Նրժմէ	1 - 2
Թատամոն Սուր - Սաժէս	3 - 1
Ալիի Սալտա - Սալամ	0 - 4
Պըրժ - Անսար	1 - 1

Ստորեւ՝ դասաւորումը.

ԽՈՒՄԲ	Մ.	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Նրժմէ	23	16	6	1	54	21	54
2.- Սաժէս	23	16	5	2	46	28	53
3.- Թ. Սուր	23	14	8	1	47	16	50
4.- Սահէլ	23	14	4	5	41	23	46
5.- Սաֆա	23	12	8	3	43	31	39
6.- Սալամ	23	11	4	8	36	25	37
7.- Պըրժ	23	9	5	9	36	35	32
8.- Անսար	23	8	7	8	30	27	31
9.- Ախա	23	8	5	10	24	30	29
10.- Ախտ	23	6	9	8	30	34	27
11.- Հ.Ս.Ս.	23	6	5	12	29	40	23
12.- Հ.Ս.Ը.Մ.	23	1	6	16	17	41	9
13.- Սալտա	23	2	3	18	18	54	9
14.- Ռասիկ	23	-	6	17	13	60	6

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԼԻՎԵՐՓՈՒԼ ԳՐԵԹԷ ԿՈՐՄՆՅՈՒՑ ՏԻՏՂՈՍԻՆ ՏԻՐԱՆԱԼՈՒ ՅՈՅՍԵՐԸ

Անգլիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 37րդ հանգրուանի մրցումներուն, Լիվերպոլու 1-0 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Թոթեմհամի դաշտէն, 2րդ դիրքէն նահանջեց 3րդ դիրքը, իր տեղը վերցնելով Մանչեսթըր Եունայթըտի, որ 1-0 արդիւնքով յաղթանակ վերադարձաւ իր տեղի վրայ: Լիվերպոլուի դէմ տեղի ունեցած մրցումին Կուսթաօ Փոյէթ նշանակեց լոնտոնեան կազմին «որք» կոլը (44րդ), 36 հապար համակիրներու ներկայութեան:

Վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Իփսուիչ (18րդ), որ կը հիւրընկալէր Մանչեսթըր Եունայթըտը, 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց անկէ: Մրցումին «որք» կոլը նշանակեց Ռուտ

ներուն արդիւնքները.

Էվըրթըն - Պլեյքպըրն 1-2

Ասթոն Վիլա - Սաութհեմթըրն 2-1

Չարլթըն - Սանտըրլէնտ 2-2

Տերպի Քաունթի - Լիժ 0-1

Ֆուլհէմ - Լայպըր Սիթի 0-0

Իփսուիչ - Մչ. Եունայթըտ 0-1

Միտլըվպորո - Չելսի 0-2

Նիքէսթըլ - Ուէսթ Համ 3-1

Թոթեմհամ - Լիվերպոլ 1-0

Պոլըն - Արսենալ (այսօր)

ԳԱՍՏԱՌՈՒԹՄ

1.- Արսենալ	78
2.- Մ. Եունայթըտ	76
3.- Լիվերպոլ	74
4.- Նիքէսթըլ	71
5.- Չելսի	64
.....
18.- Իփսուիչ	36
19.- Տերպի Քաունթի	29
20.- Լայպըր Սիթի	25

Ստորեւ՝ 37րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

ՖՈՐՄԱԿԼԱ 1

ՄԻՔԱՅԷԼ ՇՈՒՄԱԽԵՐԸ Կ'ԱՐՇԱԿԷ

Ֆորմուլա 1ի 2002ի աշխարհի ախոյեանութեան 5րդ կրան փրին, որ տեղի ունեցաւ երէկ Սպանիոյ մէջ, վերջ գտաւ Ֆենաթի գերմանացի վարորդ Միքայէլ Շումախըրի յաղթանակով, որ այսպիսով եղանակի իր չորրորդ (յաջորդաբար՝ երրորդը) բաժակը շահեցաւ:

Անոր խմբակիցը, սակայն, պրապիլցի Ռուպէնս Պարիքելլօ եղաւ անբախտ, որովհետեւ նոյնիսկ չկրցաւ շրջափազք սկսիլ, ինքնաշարժի խանգարում ունենալով: Նշենք, թէ Շաբաթ օրուան փոլ - փոպիշընի մրցումներուն, Ֆենաթի երկու վարորդները՝ Շումախըր եւ Պարիքելլօ, յաջորդաբար գրաւած էին առաջին եւ երկրորդ դիրքերը:

Շումախըր, որ այսպիսով իր ասպարէզին ընթացքին արձանագրեց իր 57րդ յաղթանակը, վարորդներուն ընդհանուր դասաւորման մէջ այժմ 21 կէտի առաւելութիւն մը ունի իր անմիջական մրցակիցին, քոլումպիացի իտալացի Փապիօ Մոնթոլայի վրայ (Ուիլիքմս), որ երէկուան կրան փրին աւարտեց 2րդ դիրքին վրայ: Անոր խմբակից Ռալֆ Շումախըր, որ փոլ - փոպիշընի մրցումներուն գրաւած էր երրորդ դիրքը, հանդիսացաւ 11րդ՝ 2 լէփ ուշացումով:

Մաքլարընի վարորդ բրիտանացի Տէյվիտ Քուլթարտ, այս եղանակին երկրորդ անգամ ըլլալով բարձրացաւ փոտոլում, դարձեալ գրաւելով երրորդ դիրքը: Ան Պրապիլի կրան փրին (Մարտ 31) հանդիսացած էր երրորդ:

Ստորեւ՝ երէկուան կրան փրին արդիւնքները.

1.- Միքայէլ Շումախըր (Գերմանիա) Ֆենարի	1 ժամ 30' 29''
2.- Խուան Փապիօ Մոնթոլա (Քոլումպիա) Ուիլիքմս	1 ժամ 31' 05''
3.- Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա) Մաքլարըն	1 ժամ 31' 12''
4.- Նիք Հիտֆէլտ (Գերմանիա) Սաուպըր	1 ժամ 31' 36''
5.- Ֆելիքէ Մասսա (Պրապիլ) Սաուպըր	1 ժամ 31' 48''
6.- Հայնց - Հէրլոտ Ֆրենցըն (Գերմանիա) Արոլ	1 ժամ 31' 50''
7.- Ժաք Վիլընէօվ (Քանադա) ՊԱՐ մէկ լէփ ուշ	
8.- Էլըն Մաքնիշ (Բրիտանիա) Թոյոթա	մէկ լէփ ուշ
9.- Միքա Սալօ (Ֆինլանտա) Թոյոթա	մէկ լէփ ուշ
10.- Եաննօ Թրոլի (Իտալիա) Ռընօ	2 լէփ ուշ
11.- Ռալֆ Շումախըր (Գերմանիա) Ուիլիքմս	2 լէփ ուշ
12.- Ենսըն Պաթըն (Բրիտանիա) Ռընօ	5 լէփ ուշ

Ստորեւ՝ վարորդներուն դասաւորումը.

1.- Միքայէլ Շումախըր (Գերմանիա) Ֆենարի	44 կէտ
2.- Խուան Փապիօ Մոնթոլա (Քոլումպիա) Ուիլիքմս	23 կէտ
3.- Ռալֆ Շումախըր (Գերմանիա) Ուիլիքմս	20 կէտ
4.- Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա) Մաքլարըն	9 կէտ
5.- Ենսըն Պաթըն (Բրիտանիա) Ռընօ	8 կէտ
6.- Ռուպէնս Պարիքելլօ (Պրապիլ) Ֆենարի	6 կէտ

Ստորեւ՝ խումբերուն դասաւորումը.

1.- Ֆենարի	50
2.- Ուիլիքմս	43
3.- Մաքլարըն	13
4.- Ռընօ	8
Սաուպըր	8
6.- Ժակուար	3
7.- Միխարտի Թոյոթա	2
9.- Արոլ	1

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԼԻՈՆ, ԹԷ ԼԱՆՍ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանութեան 33րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Լանս եւ անոր անմիջական մրցակիցը՝ Լիոն յաղթանակներ արձանագրելով, դասաւորումը պահեցին նոյնը, ուր Լանս կը շարունակէ մէկ կէտով գերազանցել Լիոնը: 34րդ եւ վերջին հանգրուանը պիտի ըլլայ շատ ճակատագրական, որուն ընթացքին պիտի յատկանայ ախոյեանին ճակատագիրը, երբ Լիոն իր դաշտին վրայ հիւրընկալէ Լանսը:

Պորտոյի դէմ տեղի ունեցած մրցումին Լիոնի փրկարար կոլը նշանակեց պրապիլցի Ռուի Անտերոն (69րդ): Երկու խումբերն ալ մրցումը աւարտեցին տասական մարպիկով: Պորտոյին կարմիր քարտ ստացաւ Քրիսթֆ Տիւլարի, իսկ Լիոնէն՝ Մարք - Վիլիէն Ֆօ (երկուքն ալ 33րդ վարկեանին):

Ստորեւ՝ 33րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Լանս - Կենկան	4 - 1
Պրոսօ - Լիոն	0 - 1
Թրուա - Պասթիա	3 - 0
Փարիզ Ս. Ժ. - Մէս	2 - 0
Լորիան - Մարսէլ	2 - 2
Մոնպօ - Օքսէն	1 - 1
Ռէն - Ստրաս	1 - 0
Սոչօ - Լիլ	0 - 0
Մոնփելիէ - Նանթ	3 - 0

ԳԱՍՏԱՌՈՒԹՄ

1.- Լանս	64
2.- Լիոն	63
3.- Օքսէն	59
4.- Փարիզ Ս. Ժ.	58
5.- Լիլ	53
.....
15.- Ռէն	38
16.- Մէս	32
17.- Կենկան	32
18.- Լորիան	30

